

ԱՐԱՐԱՏ ԵՎԿՈՔՅԱՆ



Է.Յ.Ղ. 9-ՈՂ
ԸՆՂԵԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎԸ

ԵՐԵՎԱՆ 1994

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈՒՅԱՆ

**Հ. Յ. Դ. Գ-ՐԴ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ**

(գումարման 75-ամյակի առթիվ)



«ՄԻՔԱՅԷԼ ԿԱՐԱՆԴԵԱՆ» 1994

**Հրատարակում է
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ**

«ԴԷՊԻ ԵՐԿԻՐ» ճատենաշար թիվ 18

ՀԱԿՈՒՅԱՆ Ա.

Հ 177

Հ.Յ.Դ. 9-րդ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ: - Եր.: Մ. Վարանդեան,

1994 - 45 էջ:

Գրքույկը նվիրված է Հ.Յ.Դ. կարեւորագույն համագումարներից մեկի՝ 9-րդ (Թ) Ընդհանուր ժողովի պատմությանը: Համաժողովում քննարկված հարցերի եւ ընդունված որոշումների լույսի տակ քննվում ու գնահատվում են կուսակցության եւ ժողովրդի համար առաջնային նշանակություն ունեցող մի շարք հիմնահարցեր:

Նախատեսված է Հ.Յ.Դ., Հայաստանի առաջին հանրապետության եւ ընդհանրապես հայ ժողովրդի պատմությանը հետաքրքրվողների համար:

Հ 0503020913 -94
784(01)-94

ԳՍԴ 63.3 (2Հ) 52

Երիտասարդ պատմաբան Արարատ Յակոբեանը կը թուի ինքզինք նուիրած ըլլալ Հայաստանի անդրանիկ Հանրապետութեան եւ, առհասարակ, 1918-20 թուականներու պատմութեան ուսումնասիրութեանը: Պատմագիտութեան ծանօթ է արդէն իր «Հայաստանի Հանրապետութիւն» (1918-20 թթ.)» աշխատութիւնը («Հայաստան» հրատարակչութիւն, Երեւան, 1992 թ.), որ ամփոփ բայց բաւական ամբողջական ու հարազատ պատկերն է մեր առաջին Հանրապետութեան անեղծ պատմութեան՝ տասնամեակներու ծանօթ կաշկանդումներէն եւ կեղծիքներէն ետք:

Ներկայիս ան ձեռնարկած է շնորհակալ այլ աշխատանքի մը՝ «Հ. Յ. Դաշնակցութեան 9-րդ Ընդհանուր ժողովը» մենագրութեան հրատարակութեան: Փաստական տուեալներու սակաւութեան պատճառով՝ երիտասարդական աւիւն եւ ազնիւ համարձակութիւն պահանջող նախաձեռնութիւն մը, որ պատիւ կը բերէ երիտասարդ պատմաբանին: Իրօք - եւ դժբա՛խտաբար - Հ. Յ. Դ. Իններորդ Ընդհանուր ժողովի (Երեւան, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1919) արձանագրութիւնները հասած չեն մեզի, եւ Արարատ Յակոբեան, իբրեւ հիմնական փաստաթուղթ, իր ձեռքին տակ ունեցած է միայն 1919 ի վերջին Երեւան հրատարակուած «Քաղուածներ Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներէն» գրքոյկը: Որոշումներու այդ գրքոյկին մէջ տեղ գտած օրակարգի պաշտօնական կէտերէն եւ համապատասխան եզրակացութիւններէն դուրս, Իններորդ Ընդհ. ժողովը զբաղած է նաեւ խորհրդապահական ուրիշ հարցերով, ինչպիսիք են թրքո-թաթար ապստամբ շրջաններու զսպումը, հայ զաղթականութեան վերաբնակեցումը, Յատուկի գործը (Մեծ Եղեռնի պատասխանատուներու պատուհասումը), Զանգեզուրի եւ Ղարաբաղի պաշտպանութեան խնդիրները եւ այլն: Եվ հասկնալիօրէն, ժողովական արձանագրութեանց կամ այլ փաստաթուղթերու չգոյութիւնը հնարաւորութիւն չէր ընծայեր պատմաբանին՝

այդ բոլորի մասին եւս հանգամանօրէն արտայայտուելու: Մնացեալը, ինչ որ կը պարունակէ Որոշումներու գրքոյկը կամ ինչ որ հրատարակուած է Իններորդ Ընդհանուր ժողովին մասին, Արարատ Յակոբեան շարադրած է ամենայն բժախնդրութեամբ ու հարազատօրէ՛ն: Ուստի անվերապահօրէն լիակատար յաջողութիւն կը մտղթեմ իրեն՝ պատմաբանի իր տակաւին երկար տեւելու կոչուած ասպարէզին մէջ:

Հ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

ՄՈՒՏՔ

Սույն գրքույկը նվիրված է հայ իրականության մեծագույն քաղաքական կուսակցության կարեւորագույն ընդհանուր ժողովներից (համագումար) մեկի՝ 9-րդի (Թ) պատմության լուսաբանմանը:

Հայ Հեղափոխական Ռաշնակցության (Հ.Յ.Ռ.) ավելի քան հարյուրամյա պատմությունը անբաժանելի է հայ ժողովրդի պատմությունից: Նրա գումարած ընդհանուր ժողովները, ընդունած ծրագրերը եւ ծավալած բեղմնավոր գործունեությունը բխել են հայ ժողովրդի ազգաշահ ձգտումների կենարար աղբյուրից: Հ.Յ.Ռ. պատմությունն ըստ էության հայ ժողովրդի նորագույն շրջանի պատմությունն է: Նա եղավ հայոց մերդարյա անկախության դրոշակակիրը: Եվ երբ պատմաքաղաքական դեպքերի եւ իրադարձությունների երկաթյա տրամաբանությանը 1918 թ. Հայաստանի մի փոքր հատված սպասվածից ավելի արագ ու անակնկալ կանգնեց անկախության անխուսափելի փաստի առջեւ, այդ աներեւակայելի դժվարին գործի կազմակերպումը եւ ղեկավարությունը ստանձնեց արդեն փորձառության մեծ դպրոց անցած, հայ իրականության ամենաազդեցիկ ու ամենամասնայական քաղաքական կուսակցությունը՝ Հ.Յ.Ռ.-ն: Հայ ժողովրդի հոգում դարերով անթեղված անկախության գաղափարը աստիճանաբար ոգի ու շունչ առավ եւ Ռաշնակցության անդուլ աշխատանքի ու պրակտիկ քաղաքականության շնորհիվ սկսեց դառնալ կենդանի իրողություն:

Հ.Յ.Ռ. պատմության մեջ բոլոր ընդհանուր ժողովները եղել են պատմական այն հանգրվանները, որոնցից հետո կուսակցության համար բացվել են տեսական ու գործնական աշխատանքի նոր ու լայն հորիզոններ: Այդ տեսակետից հատկանշական էր նաեւ 9-րդ Ընդհանուր ժողովը: Չնայած այստեղ կուսակցության նոր ծրագիր չի ընդունվել, բայց իր կայացրած որոշումներով եւ ծրագրամետ բանաձեւումներով ուղենշային է: Ավելին, մեր կարծիքով, սա Հ.Յ.Ռ.-ի դարձակետային համաժողովներից մեկն է:

Այս Ընդհանուր ժողովի որոշումներում ամենանշանակալին, թերեւս, Միացյալ եւ Անկախ Հայաստանի գաղափարի պաշտպանումն ու վավերացումն

էր: Ընդհանուր ժողովը հայոց անկախ պետականության պայմաններում հաստատականորեն կանգնեց, Ն. Աղբալյանի պատկերավոր խոսքերով ասած, հայ ժողովրդի արյունով ոռոգված այդ նորածիլ հանրապետությունը խնամելու էի հաստատուն ծառ դարձնելու աներկբա դիրքորոշման վրա¹:

Նման դիրքորոշումը Հ.Յ.Ռ-ի համար ի սկզբանե եղել է ուղղակի պաշտպանական խնդիր: Եվ շնայած նրա նախորդ երկու ծրագրերի համեստ քաղաքական պահանջներին՝ այնուամենայնիվ, ի սկզբանե Հ.Յ.Ռ-ն հետամուտ է եղել անկախության գաղափարի իրագործմանը: 1918-1920 թթ. հայոց պետականության պայմաններում Ռաշնակցության համար անկախությունն արդեն ոչ թե ընդամենը քաղաքական իդեալ էր, այլ պրակտիկ գործունեություն: «Հայոց պետականութեան ամրակայուժը,- մտահանգում է Հ.Յ.Ռ. Բյուրոյի ներկայացուցիչ Հրայր Մարությանը,- Ռաշնակցութեան գոյութեան իմաստն է եղել 103 տարի շարունակ»²: Այսօր էլ անկախ պետականության խնդիրը եղել ու մնում է Հ.Յ.Ռ. Հայ Ռատի կարեւոր բաղկացուցիչ մասերից մեկը:

9-րդ Ընդհանուր ժողովը շրջադարձային էր նաեւ այն իմաստով, որ Հայոց նորածին անկախ պետականության իրողության պայմաններում, Հ.Յ.Ռ-ն պատրաստվում էր փակել քաղաքական պայքարի առաջին՝ գրեթե երեսնամյա շրջանը եւ անցնել հաջորդին՝ պետականության կերտմանն ու տնտեսական վերաշինությանը: Բայց, ավաղ, արտաքին ու ներքին ուսիսների դավերի հետեւանքով, այն շատ կարճ տեւեց: Թուրք-բոլշեիկյան գործարքի ու մահաբեր ներխուժման հետեւանքով խորտակվեց Հայաստանի անկախությունը, եւ այնտեղ վերահաստատվեց բոլշեիկյան բռնակալ վարչակարգը: Հայաստանը կրկին զրկվեց իր անկախությունից: Երկրի դռներին երկաթյա վարագույր իջեցվեց: Հ.Յ.Ռ-ն հարկադրված էր դիմել վտարանդիության եւ իր գործունեությունը վերակառուցել նոր իրողություններին համապատասխան: Հետագայում եւս, սկսած 20-ական թվականներից, նա էր այն եզակի կուսակցությունը, որը հաստատունորեն մնաց Հայաստանի անկախության վերականգնման տեսակետին՝ դրանում տեսնելով Հայ ազգային քաղաքական Ռատի վերջնական լուծման երաշխիքը:

9-րդ Ընդհանուր ժողովը, նրանում բարձրացված հարցերը շատ մեծ ընդհանրություն ունեն ներկայումս մեր առջեւ ծառայած, շատ կողմերով իրար նման, երբեմն ուղղակի նույնությամբ կրկնվող հիմնահարցերի հետ: Այդ իմաստով նույնպես Ընդհանուր ժողովի նյութերին անդրադառնալը ունի ոչ միայն զուտ պատմական հետաքրքրություն, այլեւ արդիական քաղաքական նշանակություն:

1 Տե՛ս «Աշխատավոր», 5 հոկտեմբերի 1919 թ.:

2 «Երկիր», 21 դեկտեմբերի 1993 թ.:

Վերջում կցանկանայինք նշել, որ սույն գրքույկը պատրաստելիս զգացել ենք սկզբնաղբյուրների սղություն: Ռժբախտաբար, ինչպես տեղեկանում ենք մեծարգո պատմաբան եւ քաղաքական գործիչ Հ. Տասնապետյանի «Երկու խոսք»-ից՝ 9-րդ Ընդհանուր ժողովի արձանագրությունները եւ կուսակցության Բյուրոների ներկայացուցիչների հաշվետու զեկուցումները մեզ չեն հասել: Սակայն այս բացը մասամբ լրացվում է Ընդհանուր ժողովի ընդունած որոշումներով, որոնք հրապարակվել են¹: Այդ որոշումներից կարելի է գաղափար կազմել ներկայացված զեկուցումների ու ելույթների բովանդակության մասին: Ժողովի ընթացքի եւ արդյունքների մասին աղբյուրագիտական առատ նյութ են տալիս Հ.Յ.Դ. Բյուրոյի անդամ, ժողովի երեւելի դեմքերից մեկի՝ Ռուբեն Տեր-Մինասյանի հուշերը²: Սրան հակառակ ժլատ ու թոուցիկ են ժողովի մյուս նշանավոր դեմքի՝ Ս. Վրացյանի հաղորդած տեղեկությունները³: Ցավոք, կցկտոր են նաեւ Ընդհանուր ժողովի մասին լրատվական տեղեկությունները: Բացառությամբ ժողովի հանդիսավոր մասից, Ն. Աղբալյանի բացման խոսքից եւ մեկ էլ փակման կապակցությամբ մի խմբագրական ամփոփիչ մեկնաբանությունից, կուսակցության կենտրոնական օրգաններում նրա ընթացքի վերաբերյալ այլ նյութերի ու հաղորդագրությունների ըստ էության չենք հանդիպում:

Համապատասխան նյութերի սղությունը եւ գրքույկի ծավալի սահմանափակությունը մեզ թույլ չեն տվել ընդգրկելու Ընդհանուր ժողովում քննության առարկա դարձած բոլոր հարցերն ու ենթահարցերն իրենց մանրամասներով: Ուստի սույն աշխատությունը չի հավակնում սպառիչ պատասխան տալ 9-րդ Ընդհանուր ժողովի պատմության հետ կապված բոլոր հարցերին:

Նախապես ուզում ենք ընթերցողին տեղյակ պահել, որ ժողովի եւ նրա ընդունած որոշումների կենսագործման հետ կապված կուսակցության մարմինների գործունեությանը եւ առհասարակ կուսակցության կյանքի տարբեր խնդիրներին անդրադառնալիս մենք հիմնականում սահմանափակվել ենք Հայաստանի Հանրապետության շրջանակներով: Միաժամանակ, համագումարի ընթացքը եւ նրա ընդունած որոշումները քննելիս աշխատել ենք հնարավորության սահմաններում դրանք դիտարկել գործողության մեջ:

Հ.Յ.Դ. կուսակցության 1918-1920 թթ. պատմության, ընդհանրապես, եւ 9-րդ Ընդհանուր ժողովի, մասնավորապես, խորքային ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե որքան բարդ ու բազմաձայն էր նա, որն իր վրա կրում էր այդ բազմաբարդ ժամանակներում հայ ժողովրդի տարբեր հատվածների եւ ընկերային շերտերի ու խավերի ձգտումների ու մտայնությունների կնիքը:

1 Տե՛ս «Քաղվածներ Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից», Ե., 1920:

2 Տե՛ս Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. է (7), Լոս Անջելես, 1952:

3 Տե՛ս Վրացյան Ս., Կյանքի ուղիներով, հ. Ե., Բեյրութ, 1966:

Սակայն նրա բազմալար ձայնը ներդաշնակվում էր համազգային գերխնդիրների՝ առաջին հերթին Միացյալ եւ Անկախ Հայաստանի ու հայապահպանության միասնական ձգտումներին: Եվ իր ամբողջության մեջ Հ.Յ.Դ-ն մնում էր համախումբ, միասնական եւ ազգային-քաղաքական դավանանք ու իդեալներ ունեցող կուսակցություն:

1. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ - ՍԿԻԶԲ

Ավելի քան հինգ տարի կուսակցության Ընդհանուր ժողով չէր հրավիրվել: Չնայած պատերազմի նախօրյակին՝ 8-րդ Ընդհանուր ժողովում որոշում էր կայացվել կուսակցության հերթական 9-րդ համաժողովը հրավիրել 1915 թ.,¹ սակայն բացառիկ ուղեւորական իրավիճակը, մասնավորապես՝ հայոց Մեծ Եղեռնը, հնարավորություն չտվեց նշված ժամկետում այն գումարել: Աշխարհամարտը եւ դրան ուղեկցող աշխարհացունց իրադարձություններն ու աննպաստ հանգամանքները թույլ չտվեցին համագումար հրավիրել նաեւ հետագա տարիներին: Եվ այն վերջապես գումարվեց 1919 թ. արդեն անկախ Հայաստանի մայրաքաղաք Երեւանում՝ համեմատաբար խաղաղ ու հանգիստ պայմաններում:

Դեռ 1919 թ. մարտի 1-ին Հ.Յ.Դ. Արեւելյան եւ Հայաստանի Բյուրոները հայտարարության ձեով հրապարակել էին 9-րդ Ընդհանուր ժողովի օրակարգը՝ բաղկացած հինգ խումբ հարցերից:

Լավելու եւ քննարկվելու էին.

ա) կուսակցության կենտրոնական մարմինների (երկու Բյուրոների, Կ. Կոմիտեների, խորհրդարանական խմբակցության եւ այլն) գեկուցումներ ու հաշվետվություններ՝ թվով 7 ենթահարց:

բ) Սոցիալ-քաղաքական բնույթի (Սահմանադիր ժողովի, արտաքին ու ներքին քաղաքականության, զորքի, ներգաղթի, կրթության, վերաշինության, ֆինանսների, պարենավորման եւ այլն)՝ թվով 12 ենթահարց:

գ) Ծրագրային-կազմակերպական խնդիրներ (ծրագրի, կանոնադրության, կուսակցության ֆինանսների)՝ 5 ենթահարց:

դ) կուսակցության ընթացիկ կյանքի (արխիվների, թանգարանի, հրատարակությունների եւ այլն)՝ 8 ենթահարց:

ե) Ընտրություններ²:

1 Տե՛ս Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ (այսուհետեւ կրճատ՝ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ) ֆ. 4047, ց. 1, գ. 88, թ. 11:

2 Տե՛ս ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 136, թ. 1: «Հառաջ», 6 մարտի 1919 թ.:

Մինչեւ Ընդհանուր ժողովի հրավիրումը կուսակցական կազմակերպությունները, կենտրոնական ու տեղական ղեկավար մարմինները 1919 թ. գարնան եւ ամռան ամիսներին կատարել էին զգալի նախապատրաստական ու կազմակերպական աշխատանք, կայացել էին շրջանային եւ ուսյունական ժողովներ, լայն հնարավորություններ էին ընձեռնվել նախաձեռնությունների, առաջարկությունների ու դիտողությունների համար: Ընտրվել էին Ընդհանուր ժողովի պատգամավորներ՝ կուսակցության գրեթե բոլոր իրավասու մարմինների մասնակցությամբ: Համագումարին մասնակցում էին 61 պատգամավոր՝ վճռական ձայնով (աշխարհի տարբեր կողմերից) եւ 19-ը՝ խորհրդակցական (կառավարության Հ.Յ.Դ. անդամներ ու մի խումբ կուսակցական գործիչներ). ընդամենը՝ 80 պատգամավոր¹:

Այս Ընդհանուր ժողովը, իր պատգամավորների թվով ավելի քան կրկնապատիկ ներկայացուցչական էր համեմատած նախորդ՝ 8-րդ Ընդհանուր ժողովի հետ: Վերջինիս ներկա են եղել երեք Բյուրոներից (Արեւելյան, Արեւմտյան եւ Հայաստանի) ու մյուս կազմակերպություններից՝ վճռական ձայնի իրավունքով 26 հոգի եւ խորհրդակցական՝ 4 հոգի, ընդամենը՝ 30 մարդ²:

Հ.Յ.Դ. Բյուրոների նախապես արված հայտարարության համաձայն, ժողովը բացվելու էր 1919 թ. օգոստոսի 15-ին, Երեւանում³: Սակայն ինչպես հայտնի է այդ օրերին տեղի ունեցող թուրք-թաթարական ապստամբական ելույթները (խոռվությունները), մասնավորապես Բեյուկ Վեդիի արյունահեղ կոիվները, ինչպես նաեւ առանձին պատգամավորների ուշացումը պատճառ դարձան, որպեսզի համաժողովի հրավիրումը հետաձգվի: Արեւելյան Բյուրոյի օգոստոսի 11-ի նիստում որոշվեց հետաձգել ժողովի հրավիրումը⁴: Եվ այն վերջապես բացվեց 1919 թ. սեպտեմբերի 27-ին:

9-րդ Ընդհանուր ժողովը գումարվում էր մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը Փարիզի խաղարարար համաժողովից անհամբեր սպասում էր Հայկական հարցի վերջնական լուծմանը: Տակավին մնում էր շլուծված հայ ժողովրդի ճակատագրի հետ կապ ունեցող բազմաթիվ այլ հիմնահարցեր: Ահա, թե ինչ էր գրում կուսակցության պաշտոնաթերթ «Հառաջը»՝ Ս. Վրացյանի խմբագրությամբ, Ընդհանուր ժողովի բացման օրը. «*Երեսուն տարվա հեղափոխական անդուլ գործունեությունից հետո մեր կուսակցությունը կանգնած է իր ծրագրի ամենակարեւոր կետի իրազորման նախօրյակին: Հայաստանի Հանրապետության գոյության փաստը առաջ է բերել մի շարք առաջ-*

1 Տե՛ս «Քաղվածներ Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից», Ե., 1920, էջ 3-4, (այսուհետեւ՝ «Քաղվածներ...»):

2 Տե՛ս ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, § 4047, ց. 1, գ. 88, թ. 2:

3 Տե՛ս նույն տեղում, գ. 136, թ. 1:

4 Տե՛ս նույն տեղում, գ. 144, թ. 8:

նակարգ նշանակութիւն ունեցող խնդիրներ, որոնց լուծումը չի կարող հետա-
ձգվել: Հայ աշխատավորութեան զաղափարական ղեկավար կուսակցութիւնը՝
Հ.Յ.Դ., Ընդհանուր ժողովի պատգամավոր ընկերները տողորված են մի ձրգ-
տումով՝ ամրացնել Մեծ հեղափոխութեան* նվաճումները, կայուն դարձնել
Միացյալ եւ Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը, ամրապնդել Հայաստա-
նի ղեմակրատական իրավակարգը, ապահովել ղեմակրատիայի սոցիալական
բարգաւաճումը: Մենք համոզված ենք, որ ներկա Ընդհանուր ժողովի դերը
Հայաստանի իրականութեան մեջ եւ մեր կուսակցութեան կյանքում շատ մեծ
է լինելու»¹:

1919 թ. սեպտեմբերի 27-ին՝ երեկոյան ժամը 8-ին, Երեւանում՝ խորհրդարանի
դահլիճում, տեղի ունեցավ Հ.Յ.Դ. Թ Ընդհանուր ժողովի հանդիսավոր բացումը:
Դահլիճը զարդարված էր Հ.Յ.Դ. եւ Հայաստանի Հանրապետության դրոշակնե-
րով, կանաչ դրասանգներով ու ծաղեփնջերով, բեմն ու պատերը՝ ընկած վետե-
րանների, մտքի եւ զենքի հերոս գործիչներ Արամի, Խաժակի, Վարդգեսի,
Շահրիկյանի, Շահխաթունյանի, Մուրադի, Քեռու, Կարճիկյանի, Խեչոյի եւ ու-
րիշների նկարներով: Բեմի ներսի ճակատին ցուցադրված էին Հ.Յ.Դ. մեծ եր-
րորդության՝ Քր. Միքայելյանի, Ս. Զավարյանի եւ Ստ. Զորյանի նկարները
թարմ բուսապսակների մեջ, որոնք կարծես կենդանի հոգիներ ներկա էին Ընդ-
հանուր ժողովի հանդիսությանը: Բեմի դրսի ճակատին փակցված էր կարմրա-
գույն պլակատ՝ «Դեպի սոցիալիստական ինտերնացիոնալ» նշանաբա-
նով, իսկ դրանից անմիջապէս ներքեւ՝ սպիտակ մեծադիր խավաքարտի վրա, մա-
կագրված էր «Կեցցե՛ք Միացյալ եւ Անկախ Հայաստանը» կարգախոսը:

Դահլիճի առաջին մասում նստած էին Ընդհանուր ժողովի պատգամավորները:
Դահլիճի միջին մասում տեղ էին զբաղեցրել խորհրդարանի անդամները, իսկ
ցանկի մյուս կողմը՝ դահլիճի ետեւի մասում եւ պատշգամբում՝ հանդիսականների
խումբ բազմություն: Աջ օթյակում նստած էին կառավարության անդամները՝
Ալ. Խատիսյանը, Ա. Գյուլիսանդանյանը, Ս. Արարատյանը, Ավ. Սահակյանը,
Ս. Մանասյանը, բժ. Տեր-Միքայելյանը, նաեւ խորհրդարանի նախագահ՝ Սիր.
Տիգրանյանը, ձախ օթյակում՝ Երեւանի քաղաքային վարչությունը՝ քաղաքագլուխ
Մ. Մուսինյանի գլխավորությամբ:

Նշանակված ժամին որոտընդոստ բուն ծափերի տակ բեմ են դուրս գալիս
Արեւելյան եւ Հայաստանի Բյուրոների անդամները. առջեւում՝ Նիկոլ Աղբալ-
յանն էր, որին եւ վիճակված էր ժողովի հանդիսավոր բացման պատիվը: Բյու-
րոյի անդամները տեղեր են զբաղեցնում նախագահական սեղանի մոտ²:

Նիստը խոհուն ճառով բաց արեց Ն. Աղբալյանը: Նա հակիրճ կերպով բնու-

* Նկատի ունի 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը:

1 «Հառաջ», 27 սեպտեմբերի 1919 թ.:

2 Տե՛ս «Հառաջ», 1 հոկտեմբերի 1919 թ. եւ «Աշխատավոր», 5 հոկտեմբերի 1919 թ.:

թագրեց կուսակցության գործունեության վերջին հինգ տարիների արդյունքները՝ նվաճումները, հերոսությունները, հաջողությունները, բացթողումները, հիասթափությունները, ողբերգությունը: «Ընկերներ՝, հինգ տարի է անցել Հ.Յ.Դ. վերջին Ընդհանուր ժողովից: Այդ հինգ տարիների ընթացքում հայ ժողովրդի զլխով ահազին փոթորիկներ են անցել եւ դրան համապատասխան Հ.Յ.Դ-ն ահազին պատասխանատու գործեր է կատարել: Այսօր այդ բոլորի ծասին պիտի հաշիվ տրվի, զնահատություն կատարվի եւ հետզա գործունեության ծրագիր ծշակվի»¹:

Ն. Աղբալյանը անցած հինգ տարիները բնութագրեց որպես արիության, տառապանքի եւ լարված ճիգերի տարիներ: Առանձնապես վառ գույներով ներկայացրեց կամավորական շարժումը: Իր բացման խոսքում Աղբալյանը եզրահանգում էր, որ շնայած ներկա պահին հայ ժողովրդի ու Հայաստանի ապագան դեռեւս անստույգ է, սակայն հայ ժողովրդի վերջին տարիների պայքարի ու մաքառման պատմությունը ցույց է տալիս, որ նա համաշխարհային պատմության գործոն է: Այնուհետեւ Աղբալյանը խորը կսկիծով հիշատակեց Հայաստանի ազատագրության ճանապարհին ընկած կուսակցության անվանի հերոսների անունները եւ կոչ արեց հոտնկայս հարգել նրանց հիշատակը:

Ն. Աղբալյանի բացման ճառից հետո Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Ընդհանուր ժողովը ողջունեց վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը՝ ընդգծելով, որ կառավարությունն ունի այն խորը գիտակցությունը, որ ինքը ծնունդն է Դաշնակցության: Հ.Յ.Դ. Երեւանի ԿԿ-ի կողմից ժողովին ողջույնի խոսք ասաց Հայկ Սարգսյանը, իսկ Երեւանի քաղաքային ինքնավարության վարչության կողմից՝ քաղաքագլուխ Մկրտիչ Մուսինյանը:

Հարկ է նշել, որ դոնբաց է եղել միայն հանդիսավոր նիստը: Մնացած նիստերն ընթացել են դոնփակ, ամեն օր՝ երկու նիստով (առավոտյան եւ երեկոյան):

2. ԸՆԹԱՑԻԸ

Ընդհանուր ժողովի նախագահներ ընտրվեցին Հովսեփ Արղությանը, Վահան Խորենին եւ Մովսես Պետրոսյանը, որոնք հերթականությամբ վարում էին նիստերը:

Ընտրվեցին հինգ հանձնախմբեր՝ 1) դատական, 2) հաշվիչ, 3) տեղեկատու եւ խմբագրական, 4) ծրագրային ու կազմակերպչական եւ 5) կուսակցական-ընթացիկ:

¹ «Հառաջ», 2 հոկտեմբերի 1919 թ.:

Նախնական հարցերից հետո ժողովն անցավ բուն օրակարգին ու լսեց *Արեւելյան* (Ռուսաստան, Իրան) եւ *Հայաստանի* (Արեւմտյան Հայաստան, Թուրքիա, գաղթօջախներ) Բյուրոների մանրամասն զեկուցումները:

Արեւելյան Բյուրոյի կողմից զեկուցեց *Սիւնն Վրացյանը*, որը երեք ժամ տեւած գրավոր զեկուցման մեջ ներկայացրեց վերջին հինգ տարվա դեպքերը՝ տալով կուսակցության քաղաքականությունը՝ սկսած կամավորական շարժումից մինչեւ Կովկասյան ռազմաճակատի քայքայումը, Անդրկովկասի անջատումը եւ Հայաստանի Հանրապետության ստեղծումը¹:

Իսկ Հայաստանի Բյուրոյի կողմից հինգ ժամ տեւողությամբ զեկուցեց *Ռուբեն Տեր-Սիւնասյանը*, որը պարզաբանեց անցած ժամանակաշրջանի պատմաքաղաքական անցքերը՝ պատերազմի առթիվ Ց-րդ Ընդհանուր ժողովի որոշումները, Հ.Յ.Դ. եւ «Իթթիհատ» կուսակցության, ինչպես նաեւ թուրքական կառավարության հարաբերությունները, վերջինիս ծրագրած ու գործադրած տեղահանությունները, ջարդերը, հայ ժողովրդի ինքնաբուխ ինքնապաշտպանության փորձերը եւ այլն:

Երկու զեկուցումներից հետո տեղի ունեցան քննարկումները, որոնք տեւեցին երկու օր: Լրացուցիչ զեկուցումներով հանդես եկան Հայաստանի Բյուրոյի Պոլսի հատվածի կողմից Ջանիկը, Շավարշ Լեւոնյանը եւ Խ. Բալայանը:

Հաշվետու ժամանակաշրջանում երկու Բյուրոներն էլ ունեցել էին մեծ կորուստներ: Հայաստանի Բյուրոյի 9 անդամներից մահացել կամ սպանվել էին 7-ը, իսկ Արեւելյան Բյուրոյից՝ 2-ը: Այդ կորուստների թվում էին Ա. Վրոնայանը, Է. Ակնունին, Հրաչը (Հայկ Թիրաքյան), Ս. Բարսեղյանը, Ռ. Զարդարյանը, Խ. Կարճիկյանը, Ա. Մանուկյանը, Ստ. Զորյանը, Ա. Շահխաթունին, որոնք կամ սպանվել էին կամ մահացել բնական մահով²:

* * *

Ժողովի ընթացքն ու արդյունքները ճիշտ հասկանալու եւ գնահատելու համար անհրաժեշտ է հպանցիկ անդրադառնալ կուսակցության ներքին կյանքին եւ կազմակերպական վիճակին նախահամագումարյան փուլում:

Հաշվետու հինգ տարիների ընթացքում հայ ժողովրդի հետ միասին մեծ շափով տուժել էր նաեւ Հ.Յ.Դ.-ն: Կուսակցության բազմահազար դեկավար ու շարքային անդամներ զոհ էին դարձել կամավորական շարժման ժամանակ,

1 Վրացյան Ա., Կյանքի ուղիներով, հ. Ե, Բեյրութ, 1966, էջ 112-113:
2 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 54, թ. 31: «Հառաջ», 9 հոկտեմբերի 1919 թ.:

հայոց Մեծ Եղեռնի, թուրք-թաթարական հետագա հրաձակումների, 1918-19 թթ. ձրմ-
նան սովի ու համաճարակի, վրաց ու բուլշեիկ բռնությունների եւ այլնի հետե-
վանքով: Այս ամենը բացասաբար էր անդրադարձել կուսակցության կազմա-
կերպությունների աշխատանքի ու մարտունակության վրա: Երկրի՝ թուրքերի
կողմից գրավված ու օկուպացված շրջաններում խիստ թուլացել էին կուսակ-
ցական մարմինները, որոնք փաստորեն գտնվում էին կիսաքայքայված ու կազ-
մալուծված վիճակում:

1918 թ. մայիսի վերջին, երբ հռչակվեց Հայաստանի անկախությունը Հ.Յ.Դ.
մտավոր ու կենսունակ ուժերի մեծագույն մասը գտնվում էր Հայաստանից
դուրս: Նրանք կուսակցական ղեկավար մարմինների հրահանգով Թիֆլիսից,
Բաքվից եւ մերձակա ու հեռավոր արտասահմանի այլ քաղաքներից ու վայրե-
րից, շնայած շատ ծանր պայմաններին, վերադարձան Հայաստան՝ նորանկախ
հանրապետության վերաշինության գործին լծվելու. «Հայ ժողովուրդը խեղդող
օղակից դուրս հանելու»¹,

Սկզբնական շրջանում կուսակցական կյանքը աշխույժ չէր բուն հանրապետու-
թյան շրջանակներում: «Հառաջի» խմբագիր Ս. Վրացյանի վկայությամբ՝ 1918 թ.
երկրորդ կեսին «կուսակցական կյանքը Հայաստանում կենտրոնացված էր
գլխավորապես Հայաստանի Խորհրդի Դաշնակցության խմբակցության
շուրջը, որը Երեւանի ԿԿ-ի հետ փաստորեն ղեկավարում էր կուսակցական
կյանքը Հայաստանում»²:

Արդեն, սկսած 1919 թ. առաջին ամիսներից, վիճակը բարելավվում եւ կու-
սակցական եռուն վերաշինական աշխատանք է ծավալվում, երբ Թիֆլիսից
ու Բաքվից Երեւան են հասնում մեծ թվով մտավորականներ, կուսակցական
գործիչներ: Հայ քաղաքական կյանքի կենտրոնը տեղափոխվում է Երեւան:

Մինչեւ 1914 թ. սահմանները թուրքերի հետ քաշվելու եւ հանրապետության
տարածքների ընդլայնմանը զուգընթաց, հետզհետե վերակառուցվում են հին
մարմինները, ստեղծվում են նոր կազմակերպություններ ու քարոզչության
օրգաններ: Վերակազմվում են Ալեքսանդրապոլի եւ Կարսի Կենտրոնական
կոմիտեությունները:

Դաշնակցության կենսունակության ապացույցներից մեկը նրա հարուստ
մամուլն էր: Միայն Հայաստանի Հանրապետության սահմաններում արդեն
լույս էին տեսնում մեկ տասնյակից ավելի թերթեր, այդ թվում «Զանգը», «Հա-
յաստանի աշխատավորը», «Աշխատանքը», «Հառաջը»՝ Երեւանում, «Շիրակի
աշխատավորը»՝ Ալեքսանդրապոլում, «Որոտանը»՝ Գորիսում, «Արարատյան

¹ Բաբալյան Ա., Էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Կահիրե, 1959, էջ 11:

² «Հառաջ», 1 հունվարի 1920 թ.:

աշխատավորը»՝ Էջմիածնում, «Շանթ» աշակերտական թերթը՝ Երեւանում եւ այլն: Կուսակցության գլխավոր քաղաքական ուղղությունը տալիս էր «Հառաջը», որը գտնվում էր Բյուրոյի անմիջական հսկողության տակ:

* * *

Նախահամագումարյան ժամանակաշրջանում կուսակցության կազմակերպական վիճակի մասին խոսելիս պետք է հաշվի առնել մի շատ կարեւոր առանձնահատկություն: Ստեղծվել էր այնպիսի մի վիճակ, երբ ՀՀ տարածքում կար ավելի քան 300 հազար արեւմտահայ գաղթականություն, որի մեջ կուսակցական պատկանելիությամբ ամենամեծ տեսակարար կշիռը կազմում էին Հ.Յ.Դ. անդամները եւ համակրողները: Սրանք հայրենակցական հիմունքներով ստեղծել էին արտատարածքային կուսակցական կազմակերպություններ: Մինչեւ Թ Ընդհանուր ժողովը, ավելի ստույգ, մինչեւ 1919 թ. վերջերը, ՀՀ սահմաններում գործում էին հայրենակցական հիմունքներով ստեղծված կուսակցության հետեւյալ արտատարածքային մարմինները՝ Վասպուրականի, Լեռնապարի, Բագրեվանդի, Հարք-Ապահունիքի, Դուրան-Բարձրավանդակի, Բարձր Հայքի, Փոքր Հայքի եւ այլ Կենտրոնական կոմիտեությունները եւ ենթակոմիտեները, որոնք ամենեւին չէին ենթարկվում տեղական Կ. կոմիտեներին: Այսպես, օրինակ, Երեւանում հաստատված արեւմտահայերի Վասպուրականի եւ Լեռնապարի Հ.Յ.Դ. Կ. կոմիտեությունը գործում էր նույն Երեւանի տեղական Մրգաստանի Կ. կոմիտեությունից անկախ: Կամ Ալեքսանդրապոլի շրջանում գոյություն ունեցող Դուրան-Բարձրավանդակի Կ. կոմիտեությունը գործում էր տեղական Քարի եւ Ջրաբերդի Կ. կոմիտեություններից ինքնուրույն¹:

Նույն կերպ, միեւնույն տարածքում զուգահեռաբար գործող արեւելահայ եւ արեւմտահայ կուսակցական մարմիններ կային նաեւ հանրապետության սահմաններից դուրս՝ Թիֆլիսում եւ այլ վայրերում²:

Չնայած միեւնույն տարածքում զուգահեռ գործող արեւելահայ եւ արեւմտահայ կուսակցական կազմակերպությունների գլխին կար երկու Բյուրո՝ համապատասխանաբար Արեւելյան եւ Հայաստանի, սակայն կուսակցության ներսում ըստեղծված նման կազմակերպական տարանջատված վիճակը սպառնում էր նրա միասնությանը, ջլատում պետական եւ հասարակական գործերը:

Արեւմտահայ դաշնակցականների կազմակերպությունները սփռված էին ՀՀ գրեթե բոլոր գավառներում ու շրջաններում, այսինքն այն վայրերում,

1 Տե՛ս Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. է, Լոս Անջելես, 1952, էջ 155:

2 Տե՛ս նույն տեղում:

որտեղ կար արեւմտահայ հոծ գաղթականություն: Այդպիսիք էին՝ Երեւանի, Թալինի, Աշտարակի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Կոտայքի (Կրբուլախ), Ղամարլուի, Ղարաքիլիսայի, Դիլիջան-Քարվանսարայի, Սուրմալուի, Ալեքսանդրապոլի, Զանգեզուրի շրջանային կազմակերպությունները¹: Դրանցում ընդգրկված էին մեծ թվով արեւմտահայ դաշնակցական անդամներ: 1919 թ. սեպտեմբերի նախահամագումարյան տվյալներով միայն չորս շրջանների՝ Երեւանի, Թալինի, Ալեքսանդրապոլի եւ Կարսի արտատարածքային կազմակերպություններում հաշվվում էր մոտ 8000 արեւմտահայ անդամ²:

ՀՀ տարածքում գործող արեւմտահայ դաշնակցական բոլոր կոմիտեների եւ ենթակոմիտեների աշխատանքների միավորման ու կազմակերպման գործերը վարում էր «Երկրի» ԿԿ-ը³: Վերջինս հիմնվել էր հավանաբար 1917 թ. գարնանը՝ գաղթականության դեպի Երկիր վերադարձի շրջանում⁴: 1919 թ. ապրիլից «Երկրի» ԿԿ-ը հրատարակում էր իր օրգան «Աշխատանք» եռօրյա թերթը՝ Հմ. Մանուկյանի (Խորոզյանի) խմբագրությամբ:

* * *

Թող այն տպավորությունը չստեղծվի, թե համաժողովում ամեն ինչ ընթացել է հարթ ու միապաղաղ: Ինչ խոսք, կուսակցության մեջ կային ներքին հակասություններ, որոնք եւ, կարծում ենք, եղել են նրա զարգացման ու կենսունակության խթանիչները: Արդ, փորձենք քննել դրանցից ակնհայտները:

1. Ինչպես վերելում նշվեց, արեւմտահայ գաղթականության առկայությամբ, կուսակցությունը ՀՀ-ում կազմակերպչորեն փաստորեն բաժանված էր երկու հատվածի: Պետք է ասել, որ մի տեսակ խորթություն ու հակոտնյա տրամադրություններ կային տանկահայերի եւ ռուսահայերի միջեւ, որոնք դրսևորվում էին համապատասխան հատվածների պատգամավորների ելույթներում⁵: Արեւելահայ եւ արեւմտահայ հատվածների միջեւ առկա երկվության արտահայտություն էր, օրինակ, այն, որ դրանցից ամեն մեկը հրավիրում էր իր առանձին համագումարը եւ ստեղծել էր իր առանձին գործադիր մարմինը՝ Խորհուրդը:

Աշխարհամարտի տարիներին իր օջախից բնահան եղած արեւմտահայը գոհ չէր իր վիճակից: Եթե արեւելահայերի դրությունը քիչ թե շատ տանելի էր, քանզի նա ուներ տուն, հողակտոր, աշխատանք, իսկ արեւմտահայը, ա-

1 Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», 27 ապրիլի 1919 թ.:

2 Տե՛ս «Հառաջ», 2 հոկտեմբերի 1919 թ.:

3 Տե՛ս **Տասնապետյան Հ.**, Հ.3. Դաշնակցության կազմակերպական կառույցի հոլովույթը, Բեյրութ, 1985, էջ 101:

4 Տե՛ս «Ազդակ շաբաթօրյակ», 1973, թիվ 36, էջ 571:

5 Տե՛ս **Ռուբեն**, նշվ. աշխ., էջ 151:

ուանց ծածկի ու գործի, «անվում էր սեփական մարմնով» եւ մահանում տասնյակ հազարներով: Արեւմտահայ գաղթականությունն իրեն օտարացած էր համարում Հայաստանի Հանրապետությունում, անվստահ էր դեպի Հայաստանի իշխանությունները եւ ակտիվորեն շէր մասնակցում հանրապետության պետական ու հասարակական կյանքին¹:

Իր հերթին արեւելահայությունը արեւմտահայ գաղթականությանը դիտում էր որպէս եկվոր, հյուր եւ իբրեւ բեռ իր համար: Հայության երկու հատվածների նման անջրպետվածությունն իր դրոշմն էր թողնում նաեւ կուսակցության կազմակերպական-քաղաքական աշխատանքի վրա:

Եվ ահա այս բացասական երեւոյթների մտահոգությամբ էր, որ Ընդհանուր ժողովը ստիպված էր որոշում կայացնել՝ հատվածական երեւոյթներին վերջ տալ եւ ստեղծել միասնական կազմակերպություն: Բարդոյթն այստեղ արեւելահայ եւ արեւմտահայ կազմակերպությունների սուկ կազմակերպական տարանջատվածությունը շէր, այլ այն իր հիմքում ուներ քաղաքական, գաղափարական առանձին հարցերում տարակարծություններ: Այսպէս, օրինակ, արեւմտահայ դաշնակցականները ընկերվարության հարցում այնքան էլ հետետողական չէին, եթե չասենք անտարբեր էին: Պատճառն այն էր, որ արեւմտահայությունը տեղահան էր եղել մի միջավայրից՝ Արեւմտյան Հայաստանից, որտեղ ընկերվարական վարդապետության համար առանձնապէս չկար սոցիալական հող: Բացի այդ, քաղաքական կողմնորոշման ու Հայկական հարցի լուծման խնդիրներում, եթե Հ.Յ.Դ. արեւմտահայ եւ գաղութահայ հատվածն ուներ աներկբա Արեւմտյան կողմնորոշում, ապա կուսակցության ռուսահայ հատվածը եւ նրա մամուլը, մասնավորապէս Վրաստանի եւ Թիֆլիսի ԿԿ-ի պաշտոնաթերթ «Աշխատավորը» ավելի հաճախ ռուսամետ էր²: Ինչեւէ, ակնհայտ էր այն իրողությունը, որ մինչեւ Ընդհանուր ժողովը եւ ժողովի ընթացքում Հ.Յ.Դ. երկու հատվածների միջեւ առանձին հարցերում եղել են մարտավարական տարբեր մոտեցումներ ու տրամադրություններ, որոնք միանգամայն բնական երեւոյթ են ժողովրդավարական ցանկացած կուսակցության համար, մանավանդ, որ նրա առջեւ ծառայած էին այդպիսի բազմաբարդ խնդիրներ:

2. Թե՛ համաժողովում եւ թե՛ նրա պատերից դուրս Հ.Յ.Դ-ի մեջ կար *ազգային եւ ընկերային* հոսանք: Այս կապակցությամբ ՀՀ պատմության խորագիտակ մասնագետ պրոֆեսոր Ռ. Հովհաննիսյանը մատնանշում է , որ «որոշակիորեն դրսեւորվում էին ազգայնականության եւ ընկերվարության միջեւ ներքին հակասություններ»³: Եվ այս երկվությունն այնքան ակնբախ էր, որ «եթե Հա-

1 Տե՛ս նույն տեղում, էջ 151-152:

2 Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., էջ 221:

3 «Ասպարեզ», 28/29 մայիսի 1992 թ.:

յաստանի Հանրապետութիւնը գոյատեւեր, շատ հավանական է, որ Դաշնակցութիւնը պիտի բաժանվեր ընկերվարական եւ ոչ ընկերվարական ծասերի կամ նույնիսկ՝ տարբեր կուսակցութիւնների»¹:

Կուսակցության մեջ եւ պատգամավորների թվում կային մարդիկ, որոնք ավելի մեծ չափով էին հակված սոցիալիզմի գաղափարներին, իսկ կային պատգամավորներ (մեր կարծիքով կազմում էին ճնշող մեծամասնություն), որոնց մոտ գերիշխում էր զուտ ազգային հոսանքը: Վերջիններս, իրենց տեսադաշտում ունենալով զուտ համազգային հիմնախնդիրներ, առանձնապես «գերի չէին» ընկերային տեսություններին: Ինչպես արդեն ասվեց՝ հատվածային տեսակետից ազգային հոսանքը ներկայացնում էր հիմնականում արեւմտահայ գաղթականության դաշնակցական ղեկավարությունը, իսկ ընկերայինը՝ ռուսահայ: Ի դեպ՝ ընկերվար գաղափարների ամենահետեւողական ներկայացուցիչներն էին պատգամավորներ Վահան Խորենին, Արշակ Ջամայանը, Վահան Նավասարդյանը եւ ուրիշներ:

Ընդհանուր ժողովը նկատելի տեղ հատկացրեց ընկերվարության խնդիրներին: Ինչպես հայտնի է առաջին աշխարհամարտի ավարտական փուլում եւ հետո ակտիվացում տեղի ունեցավ սոցիալիստական տիպի կուսակցությունների ու շարժումների մեջ: Առանձին կուսակցություններ, նույնիսկ, իշխանության ղեկին հասնելու հնարավորություն ստացան: 1917 թ. ռուսական Մեծ (փետրվարյան) հեղափոխությունը խոշոր ազդեցություն ունեցավ հատկապես ռուսահայերի հասարակական-քաղաքական կյանքի ու հայացքների վրա: Ուժեղացան թե՛ ընկերվարային, եւ թե՛ ազգային գործոնները:

Ընդհանուր ժողովն իր պատգամավորների ճնշող մեծամասնությամբ այն համոզման էր, որ ընկերվարական կուսակցությունը, ինչպիսին Դաշնակցությունն էր, քաղաքական իշխանությունն իր ձեռքն առնելով, պետք է տակավին պահպանի դրամատիրական տնտեսակարգն ու պետական համակարգը, մինչեւ որ աստիճանաբար պայմաններ կստեղծվեն բնաշրջման (էվոլյուցիայի) ճանապարհով սոցիալիստական սկզբունքների արմատավորման համար: Ընդհանուր ժողովն ընկերային բարենորոգումները Հայաստանի Հանրապետությունում համարեց դեռեւս անժամանակ եւ չհասունացած²:

Արդարեւ, Հայաստանում չկար սոցիալիզմի անցման սոցիալ-տնտեսական բազա, չկար նաեւ դասակարգային պայքարի որեւէ հիմք: Գերազանցապես երկրագործական, ասել է թե՛ տիպիկ գյուղացիական այս երկրում, որտեղ գյուղացիությունը կազմում էր շուրջ 85 տոկոս,³ 1919 թ. հաշվվում էր ընդամենը

1 Նույն տեղում:

2 Տե՛ս «Դրոշակ», 1929, թիվ 4-5, էջ 70:

3 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 28:

10 հազար բանվորություն, այն էլ ոչ իր իսկական բովանդակությամբ¹:

Իհարկե, Ռաշնակցությանը խորթ չէին սոցիալիզմի գաղափարները, որոնք սակայն նա դիտում էր որպես ապագայի խնդիր: Հ.Յ.Ռ-ն ամենից առաջ համազգային, գործնական խնդիրներով ապրող կուսակցություն էր, քան սոցիալիստական կանխադրույթներով ու մտավարժանքներով տառապող կուսակցություն: Նա, որքան էլ արտահայտել է իր հավատարմությունը սոցիալիզմի գաղափարների հաղթանակի նկատմամբ, այնուամենայնիվ, միշտ էլ առաջնայինը համարել է համազգային հիմնախնդիրները, իսկ ընկերային կարգերի հաստատման մասին խոսք կարող էր լինել միայն քաղաքականապես ազատագրված Հայաստանում:

Այդպիսով, Հ.Յ.Ռ-ն միշտ էլ ընդգծել է ազգային արժեքների գերակայությունը սոցիալական անցողիկ տեսությունների նկատմամբ:

Ի սկզբանե սոցիալիզմը նրա համար ոչ այնքան նպատակ էր, որքան միջոց՝ նախ իր սոցիալական հեղափոխության ընդլայնելու եւ հասարակական ավելի լայն խավերի ներգրավելու համազգային հիմնախնդիրների լուծման գործում: Հավանաբար ոչ ամենեւին երկրորդական նշանակություն պետք է տալ նաեւ այն հանգամանքին, որ 1907 թ. նա Երկրորդ ինտերնացիոնալ մտավ ոչ միայն եւ ոչ այնքան իր հավատարմությունը սոցիալիզմի գաղափարներին արտահայտելու համար, որքան միջազգային այդ հեղինակավոր մարմնի ամբիոնն ու ազդեցությունն օգտագործելու հոգուտ Հայ Ռատի:

Կարծում ենք, որ չպետք է գերազնահատել Հ.Յ.Ռ-ի սոցիալիստական բընույթը, ինչպես որ փորձում են անել ներկայիս քաղաքական որոշ հակառակորդ ուժեր՝ խորհրդային սնանկացած «սոցիալիզմի» օրինակով վարկաբեկելու համար նաեւ Ռաշնակցությանը, որպես նմանօրինակ համակարգի ջատագով կուսակցություն: Եվ, առհասարակ, ընկերվարության հարցում Հ.Յ.Ռ-ն քննադատվել է եւ՝ աջից, եւ՝ ձախից: Եթե նախկինում խորհրդային պատմագրությունը Ռաշնակցությանը մեղադրում էր հակասոցիալիստական, բուրժուական լինելու մեջ, ապա այժմ էլ՝ ՀՀԾ-ական գաղափարախոսները նրան փորձում են անվանարկել ուղղափառ սոցիալիստականության համար:

Նախ, պետք է նշել, որ Ռաշնակցության դավանած սոցիալիզմը, ի տարբերություն հնչակյանների եւ մյուս կարգի սոցիալիստների, *հայացված է՝* համապատասխանեցված է հայ կյանքին ու իրականությանը: Ռաշնակցության պատկերացրած սոցիալիզմը, իր բուն էության մեջ, ընդհանուր ոչինչ չունի բոլշեիկների պատկերացրած եւ հետագայում խորհրդային պետությունում գործադրած «սոցիալիզմի» հետ: Հ.Յ.Ռ. դավանած սոցիալիզմը չունի դասակարգային, ամբողջատիրական բովանդակություն: Նա, իրեն համարելով սո-

1 Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», 16 սեպտեմբերի 1919 թ.:

ցիալիստական, երբեք չի շարաշահել սոցիալիզմի կանխադրույթները: Հ.Յ.Դ-ն, առաջին պլանում ունենալով ազգային-քաղաքական խնդիրներ, հնարավոր ու հավանական է համարել ազատագրված Հայաստանում սոցիալական արդարության վրա հիմնված, Ֆ. Լասսալի, Է. Բեռնշտայնի, Կ. Կաուցկու գաղափարների ոգով, հայացված ժողովրդավարական հասարակարգի հիմնումը:

Հ.Յ.Դ-ին ընկերվարության բովանդակության խնդրում, կարծում ենք, որ միանգամայն ճիշտ գնահատական է տվել Մ. Վարանդյանը. «Երրորդությունը (Քրիստափորը, Ռոստոմը եւ Զավարյանը - Ա. Հ.) որքան էլ փարված էին ընկերվարության գաղափարին, այնուամենայնիվ, նրանց հիմնած կուսակցությունը զուտ ընկերվարական չէր եւ նա շղարձավ այդպիսին անգամ 1907 թվականին, երբ համառուսական շարժումների հետեւանքով Վիեննայի համագումարում ընդունվեց ընկերվարական ծրագիր»¹: Այս նույն առնչությամբ Հ. Քաջազնունին դարձյալ հավաստում էր, որ «Դաշնակցության սոցիալիստականությունը մակերեւույթային էր, առանց խորը հիմքերի»²:

Այսօր էլ, չնայած Հ.Յ.Դ. ծրագրի «ընդհանուր տեսության» բաժնում դասակարգերի եւ դասակարգային պայքարի մասին արվող առանձին ձեւակերպումներին, այդուհանդերձ նա եղել ու մնում է ամենից առաջ որպես համազգային կուսակցություն: Դաշնակցության համար առաջնայինը, դոմինանտը համազգային գաղափարն է, իսկ դասակարգայինը՝ ընդամենը ածանցյալ: Միաժամանակ պաշտպանելով համազգային շահը՝ այդ չի նշանակում, թե նա անտեսում է անհատի ազատագրությունը եւ դասակարգերի իրավունքներն ու շահերը: Դաշնակցությունը, չնայած արեւմուտքի եւ ուսական սոցիալիզմի ազդեցության, արտաքուստ հանդես եկավ սոցիալիստական կեղեւով, սակայն նրա գործունեության հիմնաքարը եղան հայ ազգ-ժողովուրդը, նրա օրախնդիր շահերն ու հեռագնա նպատակները:

3. Եթե Հ.Յ.Դ-ն եւ նրա Ընդհանուր ժողովը Հայաստանի անկախության հարցում այլընտրանք չունեին, միահամուռ ու համակարծիք էին, ապա այդ անկախությունն իրապես նվաճելու ու կայացնելու խնդրում եւ՝ ժողովում, եւ՝ ժողովից դուրս դրսեւորվում էին մարտավարական տարբեր հոսանքներ ու մրտայնություններ՝ անկախության ավելի ջերմեռանդ նվիրյալներ ու թերահավատներ, դրսի օգնությանն ապավինող արեւմտամետներ ու ուսասեր դրոյականներ³ եւ վերջապես միայն սեփական ֆիզիկական ուժին ապավինողներ ու ավելի մեղմ ու փափուկ քաղաքականության կողմնակիցներ: «Այս հոսանքները, -

1 Վարանդյան Մ., Հ.Յ. Դաշնակցության պատմություն, հ. 1-ին, Փարիզ, 1932, էջ 120:

2 Քաջազնունի Հ., Դաշնակցությունը անելիք չունի այլեւս, Պուքրեշ, 1923, էջ 20:

3 Դրոյի եւ նրա կողմնակիցների մեջ բավականին ուժեղ նստած էր ռուսամետ ու կազմալուծիչ այն դիրքորոշումը, թե հայ զինվորը չպետք է գենք ուղղի ռուսական բանակի

փաստում էր Ռուբենը, - անտարակույս ազդում էին Հայաստանի թե՛ ներքին եւ թե՛ արտաքին քաղաքականութեան վրա: Կարծիքների տարբերություն կար Բյուրոյից սկսած վերջացրած շարքային անդամների մոտ»¹: Այս հոսանքների ու մտայնությունների քաղաքական խճապատկերին վերջ տալու համար Ընդհանուր ժողովը չկարողացավ վերջնական վճիռ կայացնել: Կարծում ենք, որ հնարավոր էլ չէր հստակ բանաձեւում տալ, քանզի այստեղ խոսքը վերաբերում էր գործնական քաղաքականությանը, որը դեպքերի ու հանգամանքների բերումով՝ ուժերի հարաբերակցությունը եւ քաղաքական դիրքորոշումները փոփոխվում էին ոչ միայն ամիսների, այլեւ օրերի ընթացքում: Այնուամենայնիվ, Ռ. Տեր-Մինասյանի վկայությամբ՝ Ընդհանուր ժողովը այս կապակցությամբ տրված իր քաղաքական ձեւակերպումներում ավելի շատ հակվեց մի կողմից դեպի սեփական ֆիզիկական ուժի ապավինմանը, իսկ մյուս կողմից՝ Արեւմտյան քաղաքական կողմնորոշմանը (արեւելմանը)²:

Ընդհանուր ժողովը, որպէս արտաքին գորավոր ազդակ, Հայկական հարցի լուծումը հիմնականում կապում էր «Ռաշնակիցների» օգնության հետ: Ժողովը գտավ, որ դաշնակից պետությունների հանդեպ պետք է պահպանել մինչեւ այժմ եղած բարեկամական հարաբերությունները եւ Հայաստանի մանդատը (հոգատարությունը) ժամանակավորապէս հանձնել նրանց³: Այդ պահին այլ քաղաքական կողմնորոշում չէր էլ կարող լինել, քանզի ասպարեզում չկային ուրիշ շահագրգիռ արտաքին ուժեր, որոնց հետ կարելի լիներ մեծ հույսեր կապել:

Ինչ վերաբերում էր Խորհրդային Ռուսաստանից ակնկալվելիք օգնությանը, որն, ի դեպ, այնքան չարշրկվել է քաղաքական որոշ շրջանների կողմից, ապա պետք է ասել, որ 1919 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին (ժողովի գումարման շրջանում), նա թաղված էր քաղաքացիական պատերազմի «ճահիճում» եւ ապրում էր, թերեւս, իր գոյության ամենակրիտիկական պահը: Այնուամենայնիվ, Հայաստանի կառավարությունը, ունենալով հանդերձ հիմնականում արեւմտյան արեւելում, միաժամանակ բանակցում էր Խորհրդային Ռուսաստանի հետ՝ ջանալով նորմալ, բարիդրացիական հարաբերություններ հաստատել վերջինիս հետ:

Այսպիսով, եթե Հայաստանի Արեւմտյան քաղաքական արեւելումը վերջին հաշվով չտվեց քաղաքական շոշափելի արդյունք, շլուծեց Հայկական հարցը,

դեմ, ինչ գույնի էլ, որ նա լինի, դիրքորոշում, որն ինքնաբերաբար հետագայում փոխանցվեց իր զինվորներին եւ զգալի չափով թուլացրեց ու խարխուլեց հայ մարտիկների դիմադրական ոգին 1920 թ. ճակատագրական կռիվների ժամանակ:

1 Ռուբեն, նշվ. աշխ., էջ 216:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 216-217:

3 Տե՛ս «Քաղվածներ»..., էջ 5:

բայց եւ այնպէս նպաստեց ստանալու գոնէ այն մարդասիրական օգնությունը, որն այնքան անհրաժեշտ էր 1918-1920թթ. սովահար հայությանը:

4. Ընդհանուր ժողովում եւ ժողովից դուրս՝ կուսակցության մէջ բացորոշ կերպով նկատվում էին եւս երկու մտածելակերպի ու գործելակերպի պաշտպան հոսանքներ՝ «կուսակցական» եւ «պետական»: Այդ բանը ակնհայտ դրսեվորվեց հատկապէս երկու Բյուրոների ներկայացուցիչների տված հաշվետու զեկուցումներից:

«Պետականության» հոսանքը պաշտպանեց Ս. Վրացյանը, ինչպէս նաեւ Ալ. Խատիսյանը եւ ուրիշներ, իսկ «կուսակցականության» ուղղությունը՝ մյուս զեկուցող Ռ. Տեր-Մինասյանը, ինչպէս նաեւ Ա. Ջամալյանը եւ ուրիշներ¹: «Ես կարծում էի, - գրում է Ս. Վրացյանը իր հուշերում, - որ իշխանութիւնը պետք է ղեկավարվի պետական օրենքներով, եւ արտակարգապարական անհատական կամ կոմիտեական արարքները պետական զործերը վարելու հարցում անթույլատրելի են, ծանախանդ, եթէ այդ արարքները չէին վայելելու ժողովրդականութիւնը»²:

Այս երկու հոսանքների միջեւ տարակարծությունը ի հայտ եկավ, երբ ճշտվում էր հատկապէս ներկա փուլում կուսակցության եւ կառավարության դերի ու փոխհարաբերությունների խնդիրները: Կուսակցության ղեկավար մարմիններում, այդ թվում Բյուրոյում, կային մարդիկ, որոնք ուզում էին կառավարությունը վերածել կուսակցության կցորդի: Նրանք ուղղակի գտնում էին, որ ներկա փուլում կառավարությունը պետք է ենթարկվի Բյուրոյի ցուցմունքներին³: Նրման տեսակետը իր մէջ մենաստիրական համակարգի հաստատման վտանգ էր պարունակում:

Պետական մտածելակերպի կողմնակիցները գտնում էին, որ պետականության հռչակումով կուսակցությունն իր պարտքը հիմնականում կատարել է, եւ նա, որպէս հեղափոխական կուսակցություն, պետք է տեղի տա՝ ասպարեզը թողնելով կառավարությանն ու խորհրդարանին: Իսկ այս ուղղության որոշ ծայրահեղականներ, նույնիսկ, գտնում էին, որ Հ.Յ.Դ-ն պետք է մահանա: Կուսակցության մէջ այս մտածելակերպի ամենամոլեռանդ պաշտպանը, իհարկէ, Հ. Քաջազնունին էր, որն, արտասահմանում գործուղման մէջ լինելու պատճառով, չէր մասնակցում համագումարի աշխատանքներին: Նա իր հայացքները հետագայում ձեւակերպեց իր հայտնի աշխատության մէջ⁴:

1 Տե՛ս Վրացյան Ս., Կյանքի ուղիներով, հ. Ե., Բեյրութ, 1966, էջ 113; Ռուբեն, նշվ. աշխ., էջ 342:

2 Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 153:

3 Տե՛ս «Ասպարեզ», 28/29 մայիսի 1992 թ.:

4 Տե՛ս Քաջազնունի Հ., Հ.Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլեւս, Պուքրեշ, 1923:

Քննելով երկու մոտեցումները՝ ժողովականները անցկացրին տարաձայնող կողմերը հաշտեցնող փոխզիջումային մի բանաձեռ: Ժողովը մեծամասնությամբ հանգեց այն հետեւության, որ քանի դեռ ներկայումս Հայաստանը ապրում է քաղաքական տեսակետից, իրոք, չափազանց բարդ, հեղափոխական ժամանակաշրջան, իսկ անկախ պետականության կայացման համար տակավին կպահանջվեն վիթխարի ջանքեր, ուստի կուսակցությունը (նրա ղեկավար մարմինները), շխառնվելով կառավարության ներքին գործերին ու իրավասություններին, պիտի մնար գերազանցապես հեղափոխական կազմակերպություն՝ հանձինս իր ենթակոմիտեների եւ Բյուրոյի¹: Բայց պետք է նկատել, որ Հ.Յ.Դ-ն իր հեղափոխականությունը ծառայեցնում էր, ոչ այնքան ընկերային, որքան ազգային հիմնախնդիրների լուծման նպատակներին:

Ընդհանուր ժողովում հաստատված կանոնադրությամբ՝ Բյուրոն վերահսկում էր միայն Հ.Յ.Դ. խորհրդարանական խմբակցության գործունեությունը եւ կառավարության վրա կարող էր ազդել միայն իր այդ խմբակցության միջոցով:

Խորհրդարանական խմբակցությունը նոր ընտրվելիք վարչապետի (նախարարապետի) թեկնածությունն առաջադրելիս նախապես պետք է ստանար Բյուրոյի համաձայնությունը, իսկ նախարարական թեկնածուների ցանկը խորհրդարան ներկայացնելուց առաջ նախարարապետը ստանում էր միայն խմբակցության համաձայնությունը²: Բացի այդ, խմբակցությունն իր օրինաստեղծ աշխատանքում միանգամայն ինքնուրույն էր: Ավելին, ըստ Վ. Նավասարդյանի՝ մինչեւ 1920 թ. բոլշեիկների մայիսյան խռովությունը, կուսակցության հսկողությունը եւ միջամտությունը խմբակցության ու կառավարության գործունեության վրա արտահայտվել է շատ թույլ³:

Խորհրդարանի Հ.Յ.Դ. խմբակցությունը հանդիսանում էր, մի տեսակ, շարժափոկ Բյուրոյի եւ կառավարության միջեւ: Կուսակցությունը, առաջնորդվելով պառլամենտարիզմի սկզբունքներով, աշխատում էր որպես կանոն իր քաղաքականությունն անցկացնել տալ խորհրդարանական խմբակցության միջոցով: Իր հերթին կառավարությունն իրեն պատասխանատու էր համարում միայն լայն առումով խորհրդարանի, իսկ նեղ իմաստով՝ Հ.Յ.Դ. խմբակցության առաջ եւ նրա միջոցով միայն՝ Բյուրոյի: Այդպիսի ճկուն ժողովրդավարական մեխանիզմով էր զուգորդվում ու կարգավորվում կառավարող կուսակցության (գործադիր իշխանության) փոխհարաբերությունները հետհամագումարյան ժամանակաշրջանում՝ մինչեւ 1920 թ. մայիսյան խռովությունը, երբ պատմաքա-

1 Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., էջ 230:

2 Տե՛ս «Հ.Յ.Դ. կազմակերպական կանոններ», Ե. 1919, էջ 12:

3 Տե՛ս Նավասարդյան Վ., Հ.Յ. Դաշնակցության անելիքը, Կահիրե, 1924, էջ 189:

ղաքական իրադարձությունների թելադրանքով Հ.Յ.Դ. Բյուրոն ամբողջ կազմով հարկադրված ստանձնեց կառավարությունը: Սա վտանգված հայրենիքն ու պետականությունը փրկելու հարկադիր քայլ էր:

Այդպիսով, ինչպես տեսնում ենք, կուսակցություն-պետություն փոխհարաբերության հարցում քննարկումների արդյունքում ձեւավորվեց փոխզիջումային ճկուն համակարգ, որի միջոցով ոչ կուսակցությունն էր անհարկի միջամտում պետական գործերին, եւ ոչ էլ կառավարությունն ու խորհրդարանական խմբակցությունն էին բոլորովին մեկուսացված կուսակցության ու նրա գերագույն գործադիր մարմնի՝ Բյուրոյի նախանշած քաղաքական ուղեգծից:

3. ՄԻԱՑՅԱԿ ԵՎ ԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կուսակցության գերագույն ժողովի կենտրոնական քաղաքական հիմնախնդիրը Հայկական հարցն էր, որի հիմքում ընկած էր Միացյալ եւ Անկախ Հայաստանի պահանջը:

Հաշվի առնելով առաջին աշխարհամարտի ավարտից հետո Հայկական հարցի համապարփակ լուծման համար ստեղծված նպաստավոր ռազմաքաղաքական եւ դիվանագիտական պայմանները՝ Հ.Յ.Դ-ն, իբրեւ ՀՀ հիմնական կառավարող կուսակցություն, Հայաստանի ամբողջականությունը վերականգնելու նպատակով, առաջ քաշեց եւ պաշտպանեց նրա երկու գլխավոր հատվածների (ռուսահայ եւ տանկահայ նահանգների) միավորումից Միացյալ եւ Անկախ Հայաստան ստեղծելու մասին գաղափարը:

Դեռ 1918 թ. դեկտեմբերի սկզբներին Հայաստանի Խորհուրդը իր դոնփակ նիստում որոշում է՝ հրահանգել Փարիզ մեկնող հանրապետության պատվիրակությանը վեհաժողովում պաշտպանել Միացյալ եւ Անկախ Հայաստանի գաղափարը¹: Արդեն 1919 թ. փետրվարին (6-13-ը) Երեւանում գումարված Արեւմտահայերի երկրորդ համագումարում ընդունված քաղաքական բանաձեւում առաջին անգամ հրապարակավ հռչակվեց «Ազատ եւ Միացյալ Հայաստանի անկախության» պլատֆորմը²: Իսկ 1919 թ. մայիսի 28-ին, ՀՀ անկախության հռչակման տարեդարձի օրը, հանրապետության կառավարությունը, ընդառաջ գնալով օրվա հրամայական եւ համազգային մտայնություն դարձած հայ ժողովրդի գերագույն կամքին, պաշտոնապես հրապարակեց Հայաստանի բաժան-բաժան մասերի միացման եւ «Միացյալ ու Անկախ Հայաստանի մասին»

1 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 146; գ. 183, թ. 7:

2 Տե՛ս «Համառոտ տեղեկագիր Արեւմտահայ երկրորդ համագումարի», Ե., 1919, էջ 13:

պատմական հայտարարությունը¹: Այդ ակտի ընդունումով փաստորեն քաղաքացիության իրավունք էր ստանում արեւմտահայ հատվածը: Միաժամանակ միասնանում էին հայության երկու՝ ուսահայ ու տաճկահայ հատվածների քաղաքական շահերն ու ձգտումները:

ՀՀ-ում գործող քաղաքական կուսակցություններից, թերեւս, միայն Հ.Յ.Դ-ն էր, որ այդ բախտորոշ փուլում ամենայն պատասխանատվությամբ ու հետեւողականությամբ պաշտպանում ու հետամուտ էր Միացյալ եւ Անկախ Հայաստանի գաղափարի իրականացմանը: Մնացյալ կուսակցություններն ու հատկապէս «ձախերը»՝ բոլշեիկ, էսէռ, մենշեիկ եւ այլն, ոչ միայն չէին ընդունում Միացյալ Հայաստանի գաղափարը, այլեւ, ընդհանրապէս, դեմ էին Հայաստանի (Ռուսահայաստանի) անկախությանն ու պետականությանը եւ ամեն գնով ջանում էին Հայաստանը «կրկին իր իսկական տիրոջը՝ Ռուսաստանին վերադարձնել»²,

Եսասիրական, հատվածային շահերից ելնելով՝ Միացյալ Հայաստանի հռչակման ակտին փաստորեն դեմ արտահայտվեցին Սահմանադիր ուսկապարները³: Հայ ուսկապարները վերապահությամբ էին մոտենում Միացյալ Հայաստանի գաղափարին՝ իրենց ուշադրության կենտրոնում պահելով նախ թրքահայ Դատը: Ինչ վերաբերում էր վերջիններիս գաղափարակից ու արեւելահայ նմանակին՝ Հայ ժողովրդական կուսակցությանը, ապա սա եւս սկզբնական շրջանում գործնականում դեմ արտահայտվեց Միացյալ եւ Անկախ Հայաստանի պահանջին, անգամ այս հիման վրա բոյկոտեց առաջիկա խորհրդարանի ընտրությունները, սակայն ավելի ուշ այս կուսակցությունը, գաղափարաքաղաքական բնաշրջում ապրելով, անցում կատարեց այդ գաղափարի պաշտպանության դիրքերը: «Հայ քաղաքական կուսակցութիւններից, - նշում է ուսկապարների հայտնի գործիչ ու պատմաբան Ա. Դարբինյանը, - երկրորդը (Հ.Յ.Դ-ից հետո - Ա.Հ.) Հայ ժողովրդական կուսակցութիւնն էր, որ կողմնակից դարձավ ոչ ճիշտն ազգային անկախ, այլ հետո նաեւ ճիշտացյալ Հայաստանի ստեղծման գաղափարին»⁴: Եվ 1919 թ. սեպտեմբերին ՀԺԿ երկրորդ (Բ) համագումարում ընդունված ծրագրում որդեգրվում ու պաշտպանվում է Միացյալ եւ Անկախ Հայաստանի գաղափարը եւ քաղաքականությունը⁵: Սակայն սրանք Միացյալ եւ Անկախ Հայաստանի խնդիրը ուղղակի կախման մեջ էին դնում Ռուսաստա-

1 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, §. 200, ց. 1, գ. 35, թ. 84; գ. 282, թ. 10:

2 Տես «Աշխատանք», 17 մայիսի 1919 թ.:

3 Տե՛ս Բաբայան Ա., Էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Կահիրե, 1959, էջ 43:

4 Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 436:

5 Տե՛ս «Ծրագիր Հայ ժողովրդական կուսակցության» (ընդունված Բ համագումարում 1919 թ. 7-15 սեպտեմբերի), Ե., 1919, էջ 3:

նի քաղաքական դիրքորոշումից: Հարկ է նկատել, որ Հայ ժողովրդականների, ինչպես նաև ՀՀ-ում շատ աննշան ազդեցություն ունեցող Ս. Ռամկավար կուսակցության ընդդիմությունն ավելի շատ հակադաշնակցական բնույթ (ուղղվածություն) ուներ, քան հակապետական ու հակաանկախական:

Հայ քաղաքական կուսակցություններից հաջորդը՝ 1920 թ. հունվարին հիմնրված Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություններ (նախկին սպեցիֆիկները), որը նույնպես հանգեց Միացյալ եւ Անկախ Հայաստանի պետականության տեսակետին¹:

Միացյալ եւ Անկախ Հայաստանի տեսլականը կուսակցության գործնական քաղաքականության հիմնաքար դառնալու համար պետք է վավերացվեր ու նյութականացվեր կուսակցության համաժողովում:

Մինչ համագումարի հրավիրումը Հ.Յ.Ռ. Բյուրոն մշակել էր Հայաստանի պահանջները, որում պաշտպանվում էր Միացյալ Հայաստանի գաղափարը առանց Կիլիկիայի եւ, նույնիսկ, առանց ելքի՝ դեպի ծով: Այդ ուղղությամբ հրահանգ էր տրված թե՛ կառավարությանը եւ թե՛ Փարիզ մեկնած Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը²: Բայց հանգամանքների բերումով այդ քաղաքականությունը հետետողականորեն շանցկացվեց: Պողոս Նուբար փաշայի գլխավորած Ազգային պատվիրակությունը եւ գրեթե ողջ գաղութահայությունը, այդ թվում գրեթե բոլոր արեւմտահայ դաշնակցականները, ձգտում էին նաև Կիլիկիայի անկախությանը՝ կամ առանձին, կամ Հայաստանի հետ միասին³: ՀՀ պատվիրակությունը հանուն համերաշխության, ընդառաջ գնալով գաղութահայության եւ Ազգային պատվիրակության ցանկությանը, համերաշխվեց եւ իր ստորագրությունը դրեց 1919 թ. փետրվարի 12-ի Փարիզի խաղաղության համաժողովին ներկայացվող Հայոց պահանջների հուշագրի (memorandum-ի) տակ, որում արեւելահայ եւ արեւմտահայ նահանգների հետ մատնանշված էր նաև Կիլիկիան:

Այս քաղաքական խնդիրը քննության առնվեց ժողովում, որտեղ ի հայտ եկան տարբեր տեսակետներ ու մոտեցումներ: Այդ կապակցությամբ Բյուրոյի անդամ Ռ. Տեր-Մինասյանը իր հուշերում գրում էր. «Թեև նախորդ Բյուրոյի անդամները (այդ թվում եւ ինքը - Ա. Հ.) եւ շատ պատգամավորներ պնդեցին Հայաստանի սահմանների հարցում չափավոր քաղաքականության անհրաժեշտության մասին՝ մատնանշելով Կիլիկիան եւ ուրիշ հատվածներ Միացյալ Հայաստանի սահմաններից դուրս ձգելու մասին, սակայն Ընդհանուր ժողովը,

1 Տե՛ս ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 68, թ. 1, գ. 72, թ. 5:

2 Տե՛ս Կրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 200: Ռուբեն, նշվ. աշխ., էջ 170: «Ազդակ շաբաթօրյակ», 1973, թիվ 38, էջ 607:

3 Տե՛ս Ռուբեն, նույն տեղում: «Ասպարեզ», 28/29 մայիսի, 1992 թ.:

ձայների մեծամասնությամբ, բանաձեւեց հետեւյալը. «Հայաստանի սահմանները որոշելու խնդրում արտաքին քաղաքականությունը պիտի ղեկավարվի այն ծրագրով, որը 1919 թ. փետրվարի 12-ին ներկայացվել է Փարիզի Հաշտության համաժողովին»¹: Այսպիսի որոշում կայացվեց Ընդհանուր ժողովում Հայկական հարցի վերաբերյալ առաջադրված տարբեր բանաձեւերի համադրման հիման վրա²:

Այսպիսով, կուսակցության 9-րդ Ընդհանուր ժողովը հավանություն տվեց 1919 թ. փետրվարի 12-ին Փարիզի հաշտության համաժողովին Հայաստանի միացյալ պատվիրակության ներկայացրած Միացյալ եւ Անկախ Հայաստան ստեղծելու ծրագրին, մի ծրագիր, որով ենթադրվում էր ստեղծել Ռուսահայաստանից, Արեւմտյան Հայաստանի վեց վիլայեթներից եւ Կիլիկիայից բաղկացած հայկական պետություն: Այդ նշանակում էր, որ նորընտիր Բյուրոն, ողջ կուսակցությունը պետք է առաջնորդվեին Միացյալ Հայաստանի ծավալուն (առավելագույն) սահմանների պահանջով: Սակայն պատմաքաղաքական հետագա անցքերը ցույց տվեցին, որ չափավոր պահանջներ ներկայացնող պատգամավորները՝ Ռուբենը, Վրացյանը, Բաբալյանը եւ ուրիշներ ավելի իրատես դուրս եկան, քան մեծամասնություն կազմող արմատականները: Բայց եթե Հայաստանի սահմանների, այդ թվում Կիլիկիայի խնդրում, ժողովականների կարծիքները բաժանվեցին, ապա Միացյալ, Անկախ եւ Ազատ Հայաստան ունենալու հարցում նրանք մնացին անասան:

Հիրավի, անհրաժեշտ էր կուսակցության, ամբողջ ժողովրդի ջանքերը նրպատակմղել բուն Հայաստանի երկու հատվածների միասնացման գործին եւ ոչ թե ուժերի մի մասը ջլատել ու սպառել Կիլիկիայում, որն, ինչպես հետո պարզ դարձավ, Մեծ տերությունների, մասնավորապես Ֆրանսիայի, դիվանագիտական խարդավանքների հետեւանքով ունեցավ ողբերգական ավարտ:

1920 թ. աշնանը քեմալական Թուրքիայի եւ բոլշեիկյան Ռուսաստանի համատեղ ու կոպիտ ռազմաքաղաքական միջամտության եւ Արեւմուտքի մեծ տերությունների դրսեւորած անհետեւողականության ու անտարբերության հետեւանքով ոչ միայն շիրագործվեց Սեւրի դաշնագրով նախատեսված Միացյալ, Անկախ եւ Ազատ Հայաստանի գաղափարը, այլեւ աշխարհի շատ պետությունների կողմից արդեն պաշտոնապես ճանաչված ՀՀ կորցրեց իր անկախությունը եւ խորհրդայնացվեց:

1 Ռուբեն, նշվ. աշխ., էջ 170; «Քաղվածներ...», էջ 5:

2 «Հայրենիք», 1929, թիվ 5, էջ 68:

Ընդհանուր ժողովի առջեւ ծառայած դժվարին ու առանցքային հարցերից մեկը կուսակցության ծրագրի վերաքննության խնդիրն էր: Կուսակցության Ց-րդ համագումարից հետո, անցած հինգ տարիների ընթացքում, Հայաստանում եւ համաշխարհային մասշտաբով տեղի էին ունեցել վիթխարի փոփոխություններ. աշխարհամարտ, ռուսական եւ օսմանյան կայսրությունների փլուզում, Հայաստանի անկախության հռչակում եւ այլն:

Համաշխարհային պատերազմին հաջորդած քաղաքական արմատական տեղաշարժերը, բնականաբար, նյութական անհրաժեշտություն դարձրին համապատասխան փոփոխություններ կատարել 1907 թ. Վիեննայի Ընդհանուր ժողովում հաստատված կուսակցության գործող ծրագրում: Այս կապակցությամբ կուսակցության հայտնի գործիչ Ա. Ջամալյանը գրում է. «Ստեղծված նոր կացութիւնը անհրաժեշտ էր դարձնում Դաշնակցութեան ծրագրի վերաքննութիւնը, ոչ ճիշտն ալն պատճառով, որ նրա ազգային-քաղաքական պահանջը պետք է նոր ձեւակերպութիւն ստանար, այլեւ ալն պատճառով, որ անկախ պետականութեան սահմաններում գործելու կոչված կուսակցութիւնը պիտի դժվարանար տեւականապէս գործել ճի ծրագրով, որ բոլորովին ալլ քաղաքական պայմանների հաշվառմամբ էր կազմված»¹:

Ակնհայտ էր դարձել, որ կուսակցության ծրագրի մի քանի կետեր (դրույթներ) հնացել էին: Հնացել էր ամենից առաջ նրա «նվազագոյն պահանջներ»-ի բաժինը: Այս բաժնում, ինչպէս հայտնի է, նախատեսված էին երկու իրարից անջատ Հայաստաններ՝ Արեւմտյան եւ Արեւելյան, որոնցից մեկը տեղական լայն ինքնավարությամբ եւ դաշնակցային կապերով միացած պիտի մնար Թուրքիային, իսկ մյուսը՝ Ռուսաստանին²: Ծրագրային այս պահանջը տվյալ ժամանակաշրջանի ու պայմանների համար միակ տրամաբանական ու հնարավոր միջոցն էր: Այս քաղաքական դավանանքով էլ հայ ժողովուրդը մտավ համաշխարհային պատերազմի մեջ՝ անցնելով Անտանտի (Համաձայնության) երկրների կողմը որպէս նրանց «փոքր դաշնակից»:

Սակայն 1915 թ. հայոց Մեծ Եղեռնը, 1917 թ. վերջերից ռուսական զորքերի հեռանալը Անդրկովկասից, Բրեստի կողոպտիչ հաշտության պայմանագիրը եւ այլ անբարենպաստ հանգամանքներ այլեւս ավելորդ էին դարձնում երկու Հայաստանների ինքնավարության իրականացման մասին խոսելը: Ստեղծված պայմաններում Հ.Յ.Ռ. Բյուրոն, դուրս գալով կուսակցության ծրագրի շրջանակներից, նախ հավանություն տվեց Արեւելյան Հայաստանի անկախության առա-

1 «Հայրենիք», 1931, թիվ 8, էջ 110:

2 «Հ.Յ. Դաշնակցության ծրագիր», Կ. Պոլիս, 1908, էջ 17-18:

ջարկին, ապա եւ առաջադրեց Հայաստանի Արեւելյան եւ Արեւմտյան հատվածների միավորումով *Միացյալ Հայաստանի անկախության պահանջը*¹: Որքան էլ դժոխային լինեին այս ակտերին ծնունդ տվող պատճառները, այնուամենայնիվ, դաշնակցության ջանքերի շնորհիվ այն աստիճանաբար հայ ժողովրդի համար դարձավ միս ու արյուն: Հետեւաբար անհրաժեշտ-էր, որ հասունացած այս պահանջը նոր ձեւակերպում ստանար նոր ծրագրի մեջ: Եվ այդ ձեւակերպումն արվեց Ընդհանուր ժողովում՝ ընդունված «Միացյալ եւ Անկախ Հայաստանի» մասին բանաձեւում:

Ժողովում ծրագրային նշանակության փոփոխությունն արտահայտված էր հետեւյալ երեք առանցքային կետերում.

1. Նվիրագործել *Անկախ եւ Միացյալ* Հայաստանի հայտարարությունը եւ նրա ամբողջացման ու զարգացման ձգտել բոլոր գործությամբ, ժողովրդավար (դեմոկրատիկ) հանրապետության հիման վրա:

2. Չեղյալ համարել կուսակցության նվազագույն ծրագրի Ռուսահայաստանի եւ Տանկահայաստանի վերաբերյալ քաղաքական պահանջները:

3. Ամբողջական ծրագրի վերաքննությունը հետաձգվում է հաջորդ Ընդհանուր ժողովին²:

Այսպիսով, կուսակցության 9-րդ գագաթաժողովը հանգում է իր ծրագրային գերագույն նպատակին՝ Միացյալ եւ Անկախ Հայաստան կերտելու գաղափարին: Ժողովի գրեթե մյուս բոլոր որոշումները բխում էին Միացյալ եւ Անկախ Հայաստանի ծրագրային հիմնապահանջից: Պետության արտաքին ու ներքին քաղաքականությունն իրականացնելիս դարձյալ որպես հիմք պետք է համարվեր Միացյալ եւ Անկախ Հայաստանի հիմնանպատակը: Պետք է նկատել, որ այն ժամանակ Միացյալ եւ Անկախ Հայաստանը միանգամայն իրականանալի գործընթաց էր:

Հիրավի, կուսակցության 9-րդ Ընդհանուր ժողովը շրջադարձային, պատմական եղավ այն իմաստով, որ փաստորեն առանց կենսագործման չեղյալ համարվեց 1907 թ. Վիեննայի 4-րդ Ընդհանուր ժողովում ընդունված նվազագույն ծրագրի քաղաքական պահանջների բաժինը՝ Հայաստանի երկու հատվածների ինքնավարության մասին, եւ դրա փոխարեն որդեգրվեց Հայաստանի անկախության պահանջը: Սկսած այդ պահից Ռաշնակցությունն իր դրոշի վրա պարզեց «Ազատ, Անկախ եւ Միացյալ Հայաստանի» նվիրական նպատակը:

Կուսակցության համաժողովը, բանաձեւելով Անկախ եւ Միացյալ Հայաստանի ստեղծման մասին պահանջը, ելնում էր այն հաստատ համոզումից, որ «ստեղծված պայմաններում Հայաստանի անկախութունը հայ աշխատավորության

1 Տե՛ս «Հայրենիք», 1931, թիվ 8, էջ 106:

2 Տե՛ս «Քաղվածներ...», էջ 4-5; Ռուբեն, նշվ. աշխ., էջ 205:

Ֆիզիկական ապահովության եւ քաղաքական ազատագրության ծիակ գրավականն է»¹։

Նոր ձեւակերպում պետք է ստանային նաեւ կուսակցության նվազագույն ծրագրի մեջ առաջադրված քաղաքացիական, տնտեսական եւ մշակութային պահանջներից շատերը, որովհետեւ դրանք նախատեսված ու համապատասխանեցված էին Թուրքիայի եւ Ռուսաստանի իրականությանն ու պայմաններին։ Օրինակ, 1907 թ. ծրագրում խոսվում էր արքունական տիպի հողերի, պաշտոնյաների պարտադիր երկու-երեք գլխավոր լեզու իմանալու, մշտական գորքի փոխարեն՝ ժողովրդական միլիցիայի մասին եւ այլն²։ Մինչդեռ Հայաստանի անկախության հռչակումից եւ Հ.Յ.Դ. հիմնական կառավարող կուսակցություն դառնալուց հետո նրա գործունեության գլխավոր դաշտն էր լինելու նորանկախ Հայաստանի Հանրապետությունը՝ նրա ազգային, քաղաքական, տնտեսական եւ մշակութային վերաշինությունը։

Կնշանակի 1907 թ. կուսակցության նվազագույն ծրագրի քաղաքական, տնտեսական եւ մշակութային բնույթի շատ պահանջներ եւս արդեն հնացել էին, ուստի դրանք պետք է վերափոխվեին եւ համապատասխանեցվեին Հայաստանի Հանրապետության կյանքի պայմաններին։ Մասնավորապես խնդիր էր առաջադրվում. «Ռաճկավարացնել պետության վարչական ամբողջ մեխանիզմը, վերացնելով ճիապետական կարգերի մնացորդները եւ կյանքի կոչելով ու գործունեության լայն ասպարեզ տալով տեղական ինքնավարություններին ու գյուղացիական կազմակերպություններին»³։

Սակայն Ընդհանուր ժողովը չէր կարող մի քանի շաբաթում ուսումնասիրել այն դժվարին խնդիրները, որոնք կապված էին կուսակցության ծրագրի քաղաքական վերաքննության հետ։ Դրա համար էլ նա բավականացավ միայն մի քանի փոփոխություն կատարելով։ Առաջինը, ինչպես արդեն ասվեց, ծրագրային ձեւակերպում տվեց Միացյալ եւ Անկախ Հայաստանի գաղափարին, եւ երկրորդ՝ նվազագույն ծրագրի մեջ կատարեց մի քանի սրբագրություններ, որպեսզի այն կարողանար հիմք դառնալ կուսակցության գործնական աշխատանքների համար՝ մեր ազգային պետության մեջ⁴։ Ժողովը հրահանգ տվեց նորընտիր Բյուրոյին, կուսակցական մարմիններին առայժմ ղեկավարվել նվազագույն ծրագրում տրված մի քանի խմբագրական-սրբագրական բնույթի փոփոխություններով՝ մինչեւ հաջորդ տարի հրավիրվելիք հերթական Ընդհանուր ժողովը, որտեղ եւ նախատեսվում էր մեկամյա վերամշակումից, կյանքի փոր-

1 «Քաղվածներ...», էջ 7։

2 Տե՛ս «Հ.Յ. Դաշնակցության ծրագիր», Կ. Պոլիս, 1908, էջ 19-20։

3 «Քաղվածներ...», էջ 8։

4 Տե՛ս «Հայրենիք», 1931, թիվ 8, էջ 110։

ձով հաշվառումից եւ ստուգումից հետո միայն ընդունել կուսակցության փոփոխված եւ ամբողջական ծրագիրը¹: Ժողովը շուգեց դեպքերի տրամաբանությունից առաջ ընկնել, նախընտրեց ծրագրի վերաքննությունը հետաձգել առնվազն մեկ տարով՝ ամենից առաջ հետեւելով ու սպասելով Փարիզի խաղաղության համաժողովում Հայկական հարցի լուծման արդյունքներին:

Թեւ պատմաքաղաքական հետագա աննպաստ հանգամանքների հետեւանքով այլեւս նպատակահարմար չգտնվեց կուսակցության վերամշակված եւ ամբողջացված ծրագիր ընդունելը, սակայն 9-րդ Ընդհանուր ժողովի կողմից ընդունված էական փոփոխությամբ՝ Միացյալ եւ Անկախ Հայաստանի պահանջը, մինչեւ օրս կուսակցության հին ծրագիրը հիմնականում պահպանում է իր ուժն ու այժմեականությունը եւ առանձնապես սկզբունքային փոփոխությունների կարիք չունի:

5. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Արտաքին քաղաքականություն. - Յուրաքանչյուր համաժողովի աշխատանքներում ամենագնահատելին եւ արժեքավորը, թերեւս, նրա ընդունած որոշումներն են: Կուսակցության ղեկավար մարմինների ներկայացուցիչների տված զեկուցումների ու հաշվետվությունների, տեղի ունեցած ելույթների ու քննարկումների հիման վրա ժողովը *արտաքին քաղաքականության* վերաբերյալ կայացրեց հետեւյալ կողմնորոշիչ որոշումը. «Հայաստանի արտաքին քաղաքականության առանցքը պիտի կազմե Միացյալ Հայաստանի անկախությունը օտար պետություններին ճանաչել տալու եւ ապահովելու մտահոգությունը»²:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության ապագան մեծ չափով կախված էր նաեւ հարեւան երկրների հետ ունեցած փոխհարաբերություններից ու վարվող հստակ քաղաքականությունից՝ կայացվեցին առանձին որոշումներ՝ Հայաստանին դրկից բարեկամ եւ ոչ բարեկամ երկրների հետ ունենալիք արտաքին քաղաքականության ու տնտեսական հարաբերությունների առնչու-

1 1920 թ. սեպտեմբերի 20-ին նախատեսված էր գումարել կուսակցության հերթական 10-րդ (Ժ) Ընդհանուր ժողովը: Սակայն, ինչպես հայտնի է, հետագա անակնկալ դեպքերը, 1920 թ. աշնանը հանրապետության ու հայ ժողովրդի գլխին կախված մահացու սպառնալիքը, վերահաս հայ-թուրքական պատերազմը թույլ չտվեցին կուսակցության համաժողով կայացնել: Ինչպես որ 8-րդից 9-րդ Ընդհանուր ժողովի հրավիրման համար պահանջվեց հինգ տարի, նույնպես եւ, քաղաքական աննպաստ հանգամանքների բերումով, 9-րդ Ընդհանուր ժողովից հետո դարձյալ հինգ տարի պահանջվեց, մինչեւ որ 1924 թ. նոյեմբեր-1925 թ. հունվար Փարիզում գումարվեց Հ.Յ.Դ. 10-րդը:

2 «Քաղվածներ...», էջ 5:

թյամբ: Օրինակ, Իրանի վերաբերյալ տրվեց հետևյալ ձեռակերպումը. «Պարսկաստանի հետ պահպանել նույն սերտ հարաբերությունները զոր ունեցել է Հայաստանի արտաքին քաղաքականությունը մինչև օրս, եւ որ մեծապես կհամապատասխանի հայ ժողովրդի շեշտված վերաբերմունքին դեպի պարսիկ ժողովուրդը»¹: Հարկ է նշել, որ ՀՀ գոյության ընթացքում Իրանը դրսևորեց բարյացակամ շեղորություն:

Ընդամին, կարելի է ասել, որ ժողովը թշնամական վերաբերմունք չի արտահայտել անգամ Ադրբեջանի եւ Թուրքիայի նկատմամբ, որոնց հետ Հայաստանն ուներ ազգային-տարածքային լուրջ վեճեր ու քաղաքական տարամերժ դիրքորոշումներ: Մասնավորապես, Ադրբեջանի հարցում կայացվեց հետևյալ բանաձեւը. «Հրահանգել կառավարությունը, պահպանելով Հայաստանի ու հայ աշխատավորության շահերը Ադրբեջանի սահմաններում, աշխատել բարիդրացիական հարաբերություններ սահմաններում, աշխատել բարիդրացիական հարաբերություններին վերաբերող այս առաձգական բանաձեւից զատ, Ընդհանուր ժողովը հատուկ որոշում կայացրեց Ղարաբաղի եւ Զանգեզուրի վերաբերյալ. «Իրանք համարելով անբաժանելի մասը Անկախ եւ Միացյալ Հայաստանի Հանրապետության»³: Այդ նշանակում էր, որ Հ.Յ.Դ.-ն, ձգտելով հանդերձ Ադրբեջանի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման, ոչ մի գնով նրան չէր զիջելու Ղարաբաղն ու Զանգեզուրը: Ի կատարումն այս որոշման՝ հանձնարարվեց նորընտիր Բյուրոյին՝ «բոլոր քայլերը առնել Զանգեզուրն ու Ղարաբաղը միացնելու Հանրապետությանը»⁴:

Հայկական այդ հողերի միացումով ՀՀ իրական տարածքը կկազմեր 67 հազար քառ. կմ⁵: Առաջ գնալով ասեմք, որ Զանգեզուրի հարցը լուծեց տեղի հերոսական ժողովուրդը, հատկապես կապանահայությունը՝ Գ. Նժդեհի գլխավորությամբ: Թեեւ Արցախը եւս տեւական պայքար մղեց, բայց սկզբում անգլիացիների, իսկ հետո բոլշեիկների ճնշմամբ ու պարտադրանքով բռնակցվեց Ադրբեջանին⁶: Սակայն Ղարաբաղի խնդրում Հ.Յ.Դ. մնաց իր անսասան տեսակետին անցած 70 տարում եւ է այժմ: Արդ, նա իր կառուցվածքներով, նյութական միջոցներով ու հավատավոր ազատամարտիկներով մարտնչում է փաստորեն 75-ամյա վաղեմություն ունեցող 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումը իրագործելու համար:

1 «Քաղվածներ...», էջ 6: Ռուբեն, նշվ. աշխ., էջ 173:

2 Նույն տեղում: Ռուբեն, նշվ. աշխ., էջ 184:

3 Ռուբեն, նշվ. աշխ., էջ 205:

4 «Ասպարեզ», 28/29 մայիսի 1992 թ.:

5 Ռուբեն, նշվ. աշխ., էջ 185:

6 Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1992, էջ 19, 29-30:

Գործնականում Ընդհանուր ժողովի որոշումները Միացյալ եւ Անկախ Հայաստանի, ինչպէս նաեւ Ղարաբաղի եւ Զանգեզուրի՝ Հայաստանին կցման մասին հակոտնյա էին Ադրբեջանի եւ Թուրքիայի ձգտումներին: Հասկանալի է, որ պահանջների նման կտրվածքով Թուրքիայի հետ համաձայնության գալը դառնում էր անհնարին:

Ընդհանուր ժողովը վճիռ կայացրեց հայ ժողովրդի դահիճներին պատժելու վերաբերյալ, որը եւ հետագայում փայլուն կերպով իրագործեցին հայ վրիժառուները: Միայն Էնվերի ահաբեկմանը Հ.Յ.Դ. մասնակցություն չունեցավ¹:

Ինչ վերաբերում էր Ռուսաստանի հետ տարվող քաղաքականությանը, ապա, հաշվի առնելով, որ գոյություն ունեին տարբեր Ռուսաստաններ՝ բոլշեիկյան, դենիկինյան, կոլչակյան եւ այլն, ցուցաբերվում էր տարբերակված (դիֆերենցված) մոտեցում:

Եվ ուսական այդ կառավարություններին Հայաստանը պետք է դիմադրեր այնքանով, որքանով, որ դրանք կփորձեին կրկին վերահաստատել իրենց գերիշխանությունը Ռուսահայաստանի վրա եւ դրանով խափանել Հայաստանի ամբողջացման գործը: Այդուհանդերձ, ժողովը շեշտում էր, որ պահպանվելու էր բարյացակամ, բարեկամական հարաբերությունները ուս ժողովրդի ու Ռուսաստանի քաղաքական վերածնության հանդեպ²: Պետք է նկատել, որ Հ.Յ.Դ.-ն Խորհրդային Ռուսաստանին դիմակայել է գաղափարական հարցերում, իսկ Ռուսաստանի ու ուս ժողովրդի նկատմամբ նա ընդհանրապես ոչ մի թշնամանք չի դրսեւորել: Այս առնչությամբ գտնում ենք, որ անհիմն է տասնամյակներ շարունակ խորհրդահայ պատմագրության մեջ դեգերող այն դատողությունը, թե իբր Ռաշնակցության անհաշտ, թշնամական վերաբերմունքի պատճառով Խորհրդային Ռուսաստանը երես դարձրեց Հայկական հարցի հայանպաստ լուծումից: Այնինչ, երբ 1918 թ. բոլշեիկները մերկացրին Կովկասյան ռազմաճակատը եւ Բրեստի պայմանագրով փաստորեն թաղեցին Հայ Ռատը, ո՛չ Հայաստանի Հանրապետությունը կար, ո՛չ էլ Ռաշնակցությունն էր կառավարող կուսակցություն: Իսկ այդ ժամանակ Անդրկովկասի երեք գլխավոր քաղաքական կուսակցություններից (վրաց մենշեիկներ, ազերի մուսավաթականներ եւ Հ.Յ.Դ.) թերեւս միայն Ռաշնակցությունն էր, այսպէս թե այնպէս, կողմնորոշվում դեպի Հյուսիս: Ավելին, Ռաշնակցությունը մինչեւ վերջին րոպեն դեմ է եղել Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուն³:

Իրականում հայ ժողովուրդն ու Հայաստանը, հանուն համաշխարհային

1 Տե՛ս Տասնապետյան Հ., Հ.Յ. Ռաշնակցությունը իր կազմությունեն մինչեւ Ժ Ընդհանուր ժողով (1890-1924), Աթենք, 1988, էջ 162:

2 Տե՛ս «Քաղվածներ...», էջ 6:

3 Տե՛ս «Հառաջ», 2 հոկտեմբերի, 1919 թ.:

հեղափոխության հաղթանակի, որպես քաղաքական մանրադրամ գոհաբերվեց թուրք-բոլշեիկյան համընկնող շահերին ու գործակցությանը:

Տնտեսական քաղաքականություն.— Տնտեսական քաղաքականության հարցերում համաժողովի կայացրած որոշումներից առանձնապես սկզբունքային է կողմնորոշիչ դեր խաղաց հետևյալ բանաձեւը. «Երկրի մեջ տնտեսություն ստեղծելու տեսակետից, անհրաժեշտ նախապայման լինելով դրամագլխի ազատ ծուլորը, Դաշնակցական կառավարությունը պիտի քաջալերի թե՛ օտար եւ թե՛, ծանավանդ, հայկական դրամագլխի ժամակցությունը երկրի վերաշինության, ճարտարարվեստի, հաղորդակցության եւ առեւտրի զարգացման համար»¹:

Բանն այն էր, որ հասարակական-քաղաքական որոշ շրջանների կողմից հանրապետության ներսում էի, հատկապես, դրսում այն թյուր միտքն էր տարածվում, թե Հայաստանի դաշնակցական կառավարությունը ոչ միայն չի քաջալերում մասնավոր տնտեսական (ձեռնարկչական) գործունեությունը, այլև իբր ամեն կերպ արգելք է հանդիսանում ապրանքաշուկայական հարաբերություններից ընդհանրապես: Ցավոք, Հ.Յ.Դ. հասցեին համանման մեղադրանքներ հնչում են նաև մեր օրերում: Այս ամենը արվում է՝ ելնելով այն տրամաբանական դատողությունից, որ Հ.Յ.Դ-ն իր բնույթով սոցիալիստական է, հետևաբար էլ դեմ կլինի մասնավոր սեփականությանն ու շուկայական տնտեսությանը: Բայց իրականում այդպես չէր: Հ.Յ.Դ. միշտ էլ թույլատրելի է համարել սեփականության ձեւերի բազմազանությունը՝ սկսած արտադրական ձեռնարկությունների ու հողի մասնավոր սեփականությունից մինչև պետական-համաժողովրդական անօտարելի սեփականության վրա հիմնված կոոպերատիվ ու համայնական տնտեսություններով:

Իրականում Հայաստանի կառավարությունը, ինչպես որ յուրաքանչյուր կառավարություն, հավաքական նախաձեռնության կողքին ամեն կերպ ուժ էր տալիս ու խրախուսում էր մասնավոր ձեռներեցությունը եւ «նույնիսկ դրամական նպաստ էր բաց թողնում անհատ արդյունաբերողներին՝ այս կամ այն տնտեսական ձեռնարկն սկսելու համար»²: Սույն որոշումը դարձավ ուղեցույց Հայաստանի կառավարության գործնական քաղաքականության համար: Այդ մասին ընդգծվեց նաև կառավարության հայտագրում: Եվ այս իմաստով այնքան էլ հիմնավոր չէ այն վարկածը, թե արտերկրի հայ դրամատերերը (առեւտրաարդյունաբերական կապիտալը) իրենց կապիտալները չէին ներդնում Հայաստանի տնտեսության մեջ այն պատճառով, քանզի, իբր, վախենում ու

1 Տե՛ս «Քաղվածներ...», էջ 13; «Հառաջ», 4 ապրիլի 1920 թ.:

2 Տե՛ս «Հառաջ», 4 ապրիլի 1920 թ.:

խրտնում էին դաշնակցական կառավարության սոցիալիստամետ քաղաքականությունից:

Մեր կարծիքով Կովկասի հայ կապիտալը, շհաշված առանձին բացառություններ, հիմնականում սառն ու անտարբեր գտնվեց հայրենիքի քաղաքական ճակատագրի նկատմամբ: Չնայած նա ազգային էի սոցիալ-քաղաքական հողի վրա նեղվում էի դուրս էր մղվում Ադրբեջանի, Վրաստանի իշխանությունների կողմից, այնուամենայնիվ, հայ հայրենասիրույս մեծաքսակ դրամատերերը իրենց կապիտալները հայրենիքում ներդնելու փոխարեն, նախընտրեցին «շվել» դեպի Եվրոպա էի Ամերիկա: Բայց ճշմարտության էի պատմական օբյեկտիվության առջեի մեղանշած շլինելու համար, միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ Հ.Յ.Դ-ն էի նրա կառավարությունը կատարել են նաեի արտակարգ, ընկերային-հեղափոխական բնույթի առանձին քայլեր ու միջոցառումներ՝ պետականացումներ, մասնակի բռնագրավումներ, առանձին ապրանքների պետական մենաշնորհ, գների սահմանափակումներ էի այլն¹:

Բացի այդ, կուսակցության էի կառավարության առանձին ներկայացուցիչների ելույթներում, կուսակցական մամուլում կարելի է հանդիպել համայնամետ, ձախլիկ ելույթների ու արտահայտությունների, որոնք սակայն դեռեիս բավարար հիմք չեն տալիս ընդհանրացումներ կատարել մի ամբողջ կուսակցության սոցիալ-քաղաքական դավանանքի էի ծրագրած նպատակադրումների մասին:

Ներկայիս դիտակետից որքան էի խիստ դատավորի կեցվածք ընդունենք ու տարակուսենք վերոհիշյալ արտահայտություններից, բայց էի պետք է ըմբռնել ու հասկանալ պատմաքաղաքական այն միջավայրն ու հանգամանքները, որի պայմաններում գործել է կառավարությունը:

Թեեի ՀՀ հռչակվել էր իբրեի ուսակավարական հանրապետություն, բայց պետք է նշել, որ այդ ուսակավարության հիմնական կրողը՝ ժողովուրդը, տակավին ծանոթ չէր ժողովրդավարության շատ սկզբունքների: Ամբողջատիրական երկու դաժան (ցարական էի սուլթանական) վարչակարգերին սովոր հայության երկու հատվածներում էի հնարավոր չէր հանպատրաստից (միանգամից) ժողովրդավարություն արմատավորել: Դրա համար ժամանակ էր պահանջվում: Իսկ մինչ այդ, կյանքի բնականոն ուիթմը պահպանելու, անիշխանական երեվույթների դեմ պայքարելու համար կարելուրվում ու արդարացվում էր նաեի հեղափոխական առանձին միջոցառումների դիմելու անհրաժեշտությունը²:

Զորք. - Դրույի տված գեկուցման հիման վրա ընդունվեց համապատասխան

1 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 17, թ. 8, գ. 41, թ. 1, ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 226; գ. 118, թ. 96, 107, 195, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 240, գ. 86, թ. 2-3, 7:

2 Տե՛ս «Քաղվածներ...», էջ 8-9:

որոշում՝ բոլոր քաղաքացիների պարտադիր երկամյա զինվորական ծառայության, բանակը բոլոր առումներով հայացնելու, եւ այն Հայոց պետության պաշտպանությանը ծառայեցնելու հրամայականի մասին¹: Բանակի հայացման գործում կարեւոր դեր ունեցան հատկապէս թուրքական բանակից հարյուրի չափ հայ սպաների ժամանումը եւ ծառայության անցնելը²: Մարտունակ եւ որակյալ բանակ ունենալը կուսակցությունը տեսնում էր՝ մի կողմից հզոր տրնտեսության, իսկ մյուս կողմից ռազմիկների բարոյական կայունության ու հայրենիքին նվիրվածության մեջ:

Գաղթականութուն. - Ընդհանուր ժողովը զբաղվեց նաեւ գաղթականության ու ներգաղթի հարցերով: Ներքին քաղաքականության վերաբերյալ ընդունված որոշումների 9-րդ (Թ) կետով նախատեսվում էր «Աջակցել ու կազմակերպել դրսի հայության ներգաղթը Հայաստան»³: Կազմակերպական տեսակետից ժողովը խնդիր դրեց ուժեղացնել կուսակցական մարմինների գործունեությունը Երկրում (Արեւմտյան Հայաստանում)՝ իբրեւ ներգաղթի իրագործման անհրաժեշտ նախապայման⁴:

Ինչպէս Արեւմտահայ երկրորդ համագումարում, այնպէս էլ Հ.Յ.Դ. այս Ընդհանուր ժողովում, որպէս առաջնահերթ քաղաքական նշանակության խընդիր, որոշվեց. «պայժաններ ստեղծել արեւմտահայ փախստկանները դեպի իրենց ծննդավայրը՝ Երկիր ներգաղթեցնելու համար»⁵: Եվ պետք է ասել, որ Հայաստանի կառավարությունը բավականաչափ միջոցներ ու ջանքեր գործադրեց Հյուսիսային Կովկասում, Վրաստանում, Ադրբեջանում, Իրանում եւ Միջագետքում գտնվող գաղթականներին հայրենիք վերադարձնելու ու վերաբնակեցնելու ուղղությամբ: Բավական է ասել, որ իրանահայ գաղթականության վերաբնակեցման, Միջագետքի ու Բաքվի գաղթականությանն օգնելու համար նախարարների խորհուրդը հատկացրեց 10,5 մլն. ռուբլ:⁶ Ներքին գործերի նախարարությունում հիմնվեց ներգաղթի բաժին: 1919 թ. դեկտեմբերի 4-ի կառավարության մի գրությունից տեղեկանում ենք, որ առաջիկայում Բաքվից, Թիֆլիսից եւ Գանձակից սպասվում է մոտ 80 հազար գաղթականների հոսք դեպի Հայաստան, որոնց ընդունման եւ տեղավորման համար ձեռնարկվել են միջոցառումներ:⁷

1 Տե՛ս «Քաղվածներ...», էջ 10-11:

2 Տե՛ս «Ազդակ շաբաթօրյակ», 1973, թիվ 38, էջ 607:

3 Տե՛ս «Քաղվածներ...», էջ 9:

4 Տե՛ս նույն տեղում:

5 «Համառոտ տեղեկագիր Արեւմտահայ երկրորդ համագումարի», Ե., 1919, էջ 12:

6 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 11, թ. 141; գ. 14, մաս 2-րդ, թ. 7:

7 Տե՛ս նույն տեղում, գ. 43, թ. 92:

Սակայն Հայաստանի անկախության ու պետականության դեմ ուղղված կործանարար գործընթացները կասեցրին կուսակցության եւ կառավարության կանխագծումները ներգաղթի ասպարեզում:

Կամավորական շարժում.՝ Վերլուծելով Արեւելյան եւ Հայաստանի Բյուրոների գործունեությունը՝ մասնավորապես հավանություն տրվեց կամավորական շարժման կազմակերպմանը՝ այդ շարժումը նկատելով որպես «հայ ժողովրդի ինքնապաշտպանական ծեղ պատմական փաստ եւ ծեր քաղաքական ազատագրութեան ազդակ»¹: Չկամենալով վիճարկել նման գնահատականի իրավացիությունը որպես պատմական փաստ՝ ուզում ենք արձանագրել, որ Հայկական հարցին նպաստավոր լուծում տալու խոստումով նիկոլայների եւ վորոնցովների կողմից բորբոքվող այդ շարժումը, այնուամենայնիվ, շեղում էր Հ.Յ.Դ. Ց-րդ Ընդհանուր ժողովի նախանշած շեզոքության (լույալության) մասին ուղեգծից, մանավանդ, որ Բյուրոյի անդամներ Արամ Մանուկյանը, Արշակ Վոսանյանը եւ Էլի ուրիշներ դեմ են եղել դրան²: Ընդհանրապես կամավորական շարժման ռազմաքաղաքական նշանակության մասին խոսելիս, գտնում ենք, որ նրա դերը չպետք է գերագնահատել: Հեղինակներ կան, որ այնպես ոգեւորությամբ են գրում այդ մասին, որ, կարծես, եթե հայ կամավորական այդ փոքրաթիվ խմբերը շլիճեին, ռուսները չէին կարողանա գրավել Արեւմտյան Հայաստանը: Հիրավի, ի՞նչ դեր ու տեսակարար կշիռ կարող էին խաղալ մի քանի հազար հայ կամավորները Անդրկովկասում գտնվող կես միլիոնանոց ռուսական բանակում:

Մամուլ.՝ Ընդհանուր ժողովը առանձին որոշում կայացրեց կուսակցական մամուլի մասին: Ամեն մի կուսակցության ու կառավարության ժողովրդավարության ու բացախոսության աստիճանը կարելի է չափել նաեւ նրա մամուլով, նրանում թույլատրվող քննադատության ու ինքնաքննադատության ազատությամբ եւ կարծիքների բազմազանությամբ: Եվ պետք է ասել, որ թե ամբողջ հանրապետությունում լույս տեսնող մի քանի տասնյակ անուն թերթերի ու ամսագրերի եւ թե Հ.Յ.Դ. կուսակցական մամուլի համար հիմնականում ապահովված էր այդպիսի ազատության ու բազմակարծության հնարավորություն:

Անգամ Հ.Յ.Դ. ԿԿ-ի տարբեր օրգաններ միեւնույն խնդրի վերաբերյալ հաճախ տարբեր ու նույնիսկ անհաշտելի կարծիքներ էին հայտնում: Շատերին է հայտնի, թե կուսակցական պաշտոնաթերթեր «Զանգը», «Հայաստանի աշխատավորը», «Աշխատանքը», «Հառաջը» ինչպիսի խիստ քննադատության

1 Տե՛ս «Քաղվածներ...», էջ 16:

2 Տե՛ս Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 254, 338:

Էին ենթարկում նույն կառավարող դաշնակցական կառավարությանը, էլ չենք խոսում ընդդիմադիր կուսակցությունների մամուլի մասին, որոնց քարոզչությունը երբեմն հասնում էր ընդհուպ հակապետական աստիճանի:

Ժողովը հրահանգ տվեց նորընտիր Բյուրոյին ամեն կերպ նպաստել կուսակցական մամուլի զարգացմանը: Պահանջվեց ունենալ մեկ կենտրոնական օրգան, որը պետք է լիներ կուսակցության գլխավոր ուղղության ու քաղաքականության արտահայտիչը: Այդ օրգանը դարձավ «Հառաջը»: Կուսակցության գիտական օրգանն էր դառնալու «Դրոշակը», որի հրատարակությունը ընդհատվել էր առաջին աշխարհամարտի տարիներից: Հետագա անբարենպաստ հանգամանքները եւս հնարավորություն չտվեցին «Դրոշակի» լույսընծայմանը: Եվ այն սկսվեց վերահրատարակվել միայն 1925 թվականից՝ Հ.Յ.Դ. 10-րդ (Ժ) Ընդհանուր ժողովի որոշումով¹:

Հ.Յ.Դ. պատմություն. Ընդհանուր ժողովը կազմեց հատուկ մարմին (Միքայել Վարանդյան, Ռուբեն Տեր-Մինասյան եւ Սիմոն Վրացյան)՝ կուսակցության արխիվները կարգի բերելու, պատմության վերաբերյալ նյութեր հավաքելու ու «Դիվան Հ.Յ. Դաշնակցության» մատենաշարով հրատարակելու եւ կուսակցության պատմությունը գրելու համար²: Ավելի ուշ լույս տեսան «Դիվան»-ի երկու հատորները,³ իսկ Մ. Վարանդյանը գրեց Հ.Յ.Դ. պատմությունը երկու հատորով եւ այլն⁴:

Հ.Յ.Դ. երեսնամյակ. Հ.Յ.Դ. հիմնադրման երեսնամյակի առթիվ ժողովը որոշեց 1920 թ. աշնանը հանդիսավոր կեպով տոնել Հ.Յ.Դ. երեսնամյակը: Նախատեսվում էր 1922-ին արձան կանգնեցնել Հայաստանի մայրաքաղաքում ազատության համար զոհված բոլոր ընկերների հիշատակին: Այդ նպատակով կազմակերպվելու էր հանգանակություն եւ հայտարարվելու էր մրցույթ: Բացի այդ, որոշում ընդունվեց մինչեւ 1922 թ. Հայաստանի մայրաքաղաքում ըստեղծել Հ.Յ.Դ. պանթեոն, եւ այնտեղ փոխադրել Հայաստանից դուրս թաղված կուսակցության ղեկավար ու ճանաչված ընկերների աճյունները⁵: Սակայն, ինչպես ասում են, ուրբաթն ավելի շուտ եկավ, քան շաբաթը, եւ համաժողովի շատ կանխագծումներ մնացին անկատար:

1 Տե՛ս «Դրոշակ», 1925, թիվ 1, էջ 1:

2 Տե՛ս ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 157, թ. 3: «Հառաջ», 13 նոյեմբերի 1919 թ.:

3 Տե՛ս «Դիվան Հ.Յ. Դաշնակցության», հ. 1-ին, Բոսթոն, 1934, հ. 2-րդ, Բոսթոն, 1934:

4 Տե՛ս Վարանդյան Մ., Հ.Յ. Դաշնակցության պատմություն, հ. 1-ին, Փարիզ, 1932, հ. 2-րդ, Կահիրե, 1950:

5 Տե՛ս «Քաղվածներ...», էջ 20:

Գերագույն Դատական Ատյան. - Ընդհանուր ժողովը որպես նորույթ հիմնեց Գերագույն դատական ատյան, որը մնայուն բնույթ ուներ: Դատական ատյանի նախագահ ընտրվեց Իշխան Հովսեփ Արղությանը: Վերջինիս հետագայում (Իրանում Հայաստանի դեսպան նշանակվելուց հետո) փոխարինեց տեղակալը՝ Հովսեփ Տեր-Դավթյանը, իսկ անդամներն էին Լեւոն Թադեւոսյանը եւ Մերուժան Օզանյանը: Անաշտությունն ապահովելու նպատակով դատական ատյանի անդամը կուսակցության որեւէ կազմակերպական մարմնի անդամ չէր կարող լինել¹:

Գերագույն դատական ատյանը իրավասու էր քննության առնել անհատ դաշնակցականների, ԿԿ-ների, կառավարության դաշնակցական պաշտոնյաների, խորհրդարանի Հ.Յ.Դ. խմբակցության անդամների, Բյուրոյի դրամական, քրեական եւ հակակարգապահական գործերը եւ համապատասխան վճիռ կայացնել: Դատական ատյանը խախտումներ, հանցանքներ, անօրինականություններ հայտնաբերելու եւ արձանագրելու դեպքում այդպիսիների գործերը հանձնում էր պետական դատարան կամ էլ իր հայեցողությամբ վճիռ էր արձակում՝ մինչեւ կուսակցությունից վտարելը²:

Այս մարմինն ուներ կուսակցության մեջ մի տեսակ վերահսկիչ եւ վերստուգիչ բարձրադիր ֆունկցիա: Դատական ատյանի վճիռը գործնականում վերջնական էր: Այն վերաքննելու եւ բեկանելու իրավունք ուներ միայն Ընդհանուր ժողովը: Եվ պետք է ասել, որ դատական ատյանը եղել է շատ գործուն մարմին: Նրա կայացրած վճիռները անկասելի էին ու արդարացի, որոնք հետամուտ էին նախ եւ առաջ Հ.Յ.Դ. անդամի, անկախ զբաղեցրած պաշտոնից ու դիրքից, անձնական մաքրության ու գաղափարաբարոյական անաղարտության պահպանմանն ու ամրապնդմանը: Դատական ատյանի հետհամագումարյան շրջանում կայացրած վճիռներից հարկ է հիշատակել Միրզոյանի արտաքսումը կուսակցությունից՝ Հ.Յ.Դ. Իրանի կազմակերպությունում ֆրակցիոն ու պառակտիչ գործունեություն ծավալելու համար³: Հակակուսակցական, ձախլիկ, պրոբուլշեիկյան գործունեության ու վարքագծի համար Գերագույն դատական ատյանը 1920 թ. հունիսի 12-ի որոշմամբ կուսակցության շարքերից վտարեց Արհեստակցական միությունների միության նախագահ Հայկ Ավալյանին⁴: Կաշտակերության համար Էջմիածնի շրջանի նախկին կոմիսար Գեորգ Ալթունյանը վտարվեց կուսակցությունից, եւ նրա գործը հանձնվեց պետական դատա-

1 Տե՛ս **Տասնապետյան Հ.**, Հ.Յ. Դաշնակցության կազմակերպական կառույցի հոլովույթը, Բեյրութ, 1985, էջ 112:

2 Տե՛ս «Հառաջ», 9 հունվարի 1920 թ.:

3 Տե՛ս **Ռուբեն**, նշվ. աշխ., էջ 176:

4 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 4047, ց.1, գ. 182^ա, թ.3, գ. 18, թ. 10:

րան¹: Դատական ատյանի վճիռները տպագրվում էին կուսակցության կենտրոնական օրգան «Հառաջ»-ում:

Ընտրություններ. - Հ.Յ.Դ. Բյուրոների՝ Արեւելյան եւ Հայաստանի հնգամյա գործունեությունը գնահատելիս Ընդհանուր ժողովը խիստ քննադատության ենթարկեց երկուսին էլ: Չնայած երկու Բյուրոների ունեցած մարդկային կորուստներին, այնուամենայնիվ, փաստվեց, որ անցած հինգ տարիների վայրիվերումների ընթացքում նրանք չէին կարողացել մշակել մեկ ընդհանուր ուղեգիծ եւ ինչպես հարկն է դեկավարել կուսակցական կյանքը²: Դրա փոխարեն Բյուրոների անդամները, իրերի բերումով, ավելի հաճախ ստանձնել են գործադիր պաշտոններ՝ ընդգրկվելով Ազգային Բյուրոյում եւ Խորհրդում, Սեյմում, Անդրկովկասյան կառավարությունում եւ այլն³: Արդյունքում՝ կուսակցությունը չի ունեցել միասնական ուղեգիծ (տեսակետ), նրա մարմինները եղել են իրարից կտրված եւ գործել են տարբեր ուղղություններով: Կուսակցության նոր բարձրագույն գործադիր մարմին՝ Բյուրո ընտրելիս, ցանկություն հայտնվեց, որպեսզի նա հավաքական վճիռներ կայացնելու հիման վրա, կարողանա կոորդինացնել կուսակցական մարմինների գործունեությունը:

Նախկին երկու Բյուրոների (Հայաստանի եւ Արեւելյանի) փոխարեն ընտրվեց մեկ Բյուրո՝ կազմված յոթը անդամից եւ երեք փոխանդամից⁴:

Այդ նշանակում էր, որ կուսակցությունը ապակենտրոն երկու Բյուրոների փոխարեն այժմ պիտի ունենար Հ.Յ.Դ. մեկ Բյուրո՝ գործադիր մարմնի իրավունքներով: Սրան համապատասխան պետք է փոփոխվեր նաեւ կուսակցության կանոնադրությունը:

Նորընտիր Բյուրոյի կազմում մտան անդամներ՝ Համազասպ Օհանջանյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Սիմոն Վրացյանը, Արշակ Ջամալյանը, Սարգիս Արարատյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Արմեն Գարոն (Փաստրմաճյան), փոխանդամներ՝ Գեորգ Ղազարյանը, Արսեն Շահմազյանը եւ Վահան Նավասարդյանը: Բյուրոյի նիստերին վճռական ձայնի իրավունքով մասնակցում էին միայն անդամները: Բյուրոյի նստավայրը Հայաստանի մայրաքաղաքն էր:

1 Տե՛ս «Հառաջ», 9 հունվարի 1920 թ.:

2 Տե՛ս **Տասնապետյան Հ.**, Հ.Յ. Դաշնակցության կազմակերպական կառույցի հոլովույթը, Պեյրուք, 1985, էջ 99:

3 Տե՛ս «Քաղվածներ...», էջ 14-15:

4 Տե՛ս «Հ.Յ.Դ. կազմակերպական կանոններ», Ե. 1919, էջ 9:

Ընդհանուր ժողովն անդրադարձավ կուսակցության կազմակերպական (շինարարության) խնդիրներին, քանզի, հատկապես ՀՀ առաջացումով, նրա գործունեության համար հայրենիքում եւ դրսում ստեղծվել էին նոր պայմաններ: Ուստի անհրաժեշտ էր կուսակցության կազմակերպական աշխատանքները կատարելագործել՝ համապատասխանեցնելով նոր պայմաններին ու պահանջներին: Նախկին անլեզավ ու կիսալեզավ Հ.Յ.Դ. դարձել էր միանգամայն ազատ ու նույնիսկ կառավարող կուսակցություն իր անկախ հայրենիքում: Այստեղից էլ նյութական անհրաժեշտություն էր դարձել կուսակցության կազմակերպական կանոնների փոփոխությունը:

Ամենից առաջ կանոնադրական-կազմակերպական առումով պետք է լուծվեր երկու կարեւոր խնդիր: Նախ, հաշվի առնելով, որ Հ.Յ.Դ. դարձել էր կառավարող կուսակցություն, անհրաժեշտություն էր առաջացել, որպեսզի թույլ չտրվի միեւնույն անձին համատեղել կուսակցական եւ պետական ղեկավար պաշտոններ: Սա ընդունված կարգ էր եւ բնորոշ էր բոլոր քաղաքակիրթ, ժողովրդավարական պետություններին: Համաձայն այս փոփոխության՝ (հոդված 65) «Կառավարութեան ղաշնակցական անդամները ճիշտամանակ կուսակցական որեւէ ժառմնի անդամ չեն կարող լինել»¹: Այդ նշանակում էր, որ միանգամից Բյուրոյի չորս անդամներ, որոնք կառավարության մեջ էին որպես նախարարներ (Ա. Գյուլխանդանյան եւ Ս. Արարատյան) կամ ունեին պետական պաշտոններ արտասահմանում (Հ. Օհանջանյան եւ Ա. Գարո), կամ պետք է թողնեին պետական պաշտոնները, կամ էլ զրկվեին Բյուրոյի անդամությունից: Արդյունքում՝ կառավարության մեջ գտնվող Հ.Յ.Դ. Բյուրոյի անդամները հարկադրված դադարեցին գործունե կերպով մասնակցել Բյուրոյի աշխատանքներին: Կուսակցության գերագույն գործադիր մարմնի բեռը ընկավ Ս. Վրացյանի, Ա. Զամալյանի եւ Ռ. Տեր-Մինասյանի վրա, որոնց օգնում էին երեք փոխանդամները՝ Գ. Ղազարյանը, Վ. Նավասարդյանը եւ Ա. Շահմազյանը: Ի դեպ՝ վերջինս պատասխանատու պաշտոն ուներ Զանգեզուրում:

Այնուհետեւ, մյուս կանոնադրական փոփոխությունն այն էր, որ, նկատի ունենալով միեւնույն տարածքում (շրջանում) իրարից անկախ եւ իրար զուգահեռ կուսակցական մարմինների (տեղական ու գաղթական) գոյությունը չի համապատասխանում կուսակցության ծրագրային եւ կանոնադրական պահանջներին, ժողովը որոշեց.

ա) «Թույլ չտալ ճի ԿԿ-ի սահմաններում, մեկ այլ ԿԿ-ի գոյութիւնը եւ

1 «Հ.Յ.Դ. կազմակերպական կանոններ», Ե., 1919, էջ 13:

բ) Տվյալ ԿԿ-ի սահմանների մեջ եղած բոլոր կոմիտեները պիտի ենթարկվեն այդ շրջանի ԿԿ-ին միայն»¹: Պատգամավոր Ռ. Տեր-Մինասյանը հավաստում է, որ ժողովը նման որոշման հանգեց, որովհետև կուսակցության մեջ նոր կուսակցություն ստեղծելու տրամադրություններ կային²:

Համաձայն այս որոշման ու նոր մշակված կանոնադրության պահանջների՝ «Երկրի» ԿԿ-ն հրահանգ է ստանում Բյուրոյից՝ միանալ Երեւանի ԿԿ-ին եւ արեւմտահայ կոմիտեները միացնել ու ձուլել տեղական կազմակերպություններին: Ընդ որում «Երկրի» ԿԿ-ի այն անդամները, որոնք գտնվում էին Երեւանում, պետք է միանային Երեւանի ԿԿ-ին, իսկ մյուս շրջաններում գտնվող անդամները՝ տեղի կոմիտեությանը³: Այսպիսի որոշում կայացնելիս Ընդհանուր ժողովը ելնում էր այն միասնական համոզմունքից, որ Միացյալ Հայաստանի հռչակումով պետք է վերանան հատվածային խնդիրները կուսակցության ներսում, քանզի ամեն վայրի համար կուսակցության ծրագիրը մեկն է:

Ընդհանուր ժողովը նորընտիր Բյուրոյի վրա պարտականություն դրեց վերացնել երկու հատվածների միջեւ եղած տարակարծություններն ու անվստահությունը, ստեղծել միաձույլ կազմակերպություն եւ բոլոր տարրերին լծել կուսակցական ու պետական շինարար աշխատանքի⁴: Բյուրոն պետք է քանդեր զուգահեռ կազմակերպությունները եւ դրանց փոխարեն ստեղծեր նորը՝ ձուլելով երկուսին իրար հետ: Ի դեպ՝ կանոնադրական այս սկզբունքը տարածվում էր հիմնականում ՀՀ կազմակերպությունների վրա եւ պարտադիր չէր գաղութներին (հայկական գաղթօջախներին)⁵:

Ի կատարումն Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշման եւ Բյուրոյի կարգադրության՝ Երեւանի ու «Երկրի» Կենտ. կոմիտեները 1919 թ. նոյեմբերի 15-ի միացյալ նիստում որոշեցին՝ միանալով կազմել մեկ ԿԿ եւ այսուհետ գործել «Երեւանի ԿԿ» անունով: Իսկ նոյեմբերի 24-ի «Երեւանի» ԿԿ-ի եւ «Երկրի» ԿԿ-ի հրապարակած համատեղ շրջաբերականով հրահանգվում էր շրջանների արեւմտահայ եւ տեղական բոլոր մարմիններին ու ընկերներին «անհապաղ միանալ՝ կազմելու համար մի մարմին եւ միասին վարելու տեղական կուսակցական գործերը»⁶:

Կուսակցության արեւմտահայ արտատարածքային հատվածների ձուլման ու կենտրոնացման գործը հաջողությամբ իրականացվեց հատկապես Վ. Խորե-

1 Տե՛ս «Քաղվածներ...», էջ 23: Ռուբեն, նշվ. աշխ., էջ 151:

2 Ռուբեն, նշվ. աշխ., էջ 154:

3 Տե՛ս «Հառաջ», 15 նոյեմբերի 1919 թ.:

4 Ռուբեն, նշվ. աշխ., էջ 156:

5 Նույն տեղում, էջ 159:

6 «Աշխատավոր», 10 դեկտեմբերի 1919 թ.:

նու, Կորյունի, Մ. Օզանյանի, Հ. Դեվեճյանի, Վ. Քրնոյանի, Կ. Սասունու, Վ. Նավասարդյանի, Նորհատյանի եւ ուրիշների թափած եռանդուն ջանքերի շնորհիվ¹: Արդեն 1919 թ. վերջերին միավորումը հիմնականում ավարտվել էր: Առանց ներքին ցնցումի հաջողվեց ստեղծել միաձույլ կազմակերպություն:

Կանոնադրական այս էական փոփոխությունը ամենեւին էլ չէր հակասում կուսակցության ապակենտրոնացման ոգուն եւ, ինչ խոսք, նպաստեց նրա շարքերի միասնության ու համախմբվածության ամրապնդմանը:

Կուսակցության նոր հաստատված եւ շուտով լույս տեսած կանոնագրով² ՀՀ բաժանվեց կուսակցական երեք կազմակերպական շրջանների՝ Երեւանի («Մրգաստանի»), Ալեքսանդրապոլի («Շիրակի») եւ Կարսի («Ջրաբերդի») Կ. Կոմիտեությունների, ինչպես նաեւ երկու՝ Ջանգեզուրի ու Լեռնային Ղարաբաղի կոմիտեությունների: Վերջիններս ուղղակիորեն կապված էին Բյուրոյի հետ, ընդգծելու համար այդ շրջանների վրա Հայաստանի ունեցած անվիճելի իրավունքը³:

Կուսակցության կազմակերպական միասնության ամրապնդման շնորհիվ կրճատվեց կուսակցական մարմինների թիվը, ուժեղացվեց դրանց շարժունակությունը: Այսպես, եթե նախքան Ընդհանուր ժողովը Հ.Յ.Դ. ամփոփված էր կուսակցության 26 մարմիններում (Բյուրոներ, ԿԿ-ներ եւ կոմիտեություններ), ապա ժողովից հետո իրականացված կազմակերպական վերակառուցմամբ թողնվեց ընդամենը 16 մարմին, այսինքն կրճատվեց 10-ով⁴:

Որպես նորույթ, հաշվի առնելով երկաթուղու աշխատանքի կարելությունը ՀՀ-ում, հիմնվեց ոչ տարածքային «Երկաթուղիների Կ Կոմիտեություն», եւ երկաթուղային աշխատողների (ուր հաշվում էր մոտ 6000 մարդ) կազմակերպման ու նրանց վրա հսկողության գործը հանձնարարվեց Հ.Յ.Դ. Բյուրոյի անդամ Ա. Ջամալյանին: Երկաթուղային Կ Կոմիտեի ծավալած արդյունավետ կազմակերպական, քաղաքական-դաստիարակչական գործունեության շնորհիվ զգալիորեն բարելավվեց երկաթուղու աշխատանքը: Այդ կոմիտեի ջանքերով կառավարությունը հիմնականում բավարարում տվեց այդ համակարգում աշխատող գործադուլավորների արդարացի պահանջներին⁵:

Հ.Յ.Դ. կուսակցության կազմակերպական օղակները ստորաբաժանվում

1 Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., էջ 158:

2 «Հ.Յ. Դ. կազմակերպական կանոններ», Ե., 1919:

3 Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., էջ 157, 159: «Ազդակ շաբաթօրյակ», 1973, թիվ 37, էջ 586:

4 Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., էջ 159:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 161:

Էին հետևյալ կարգով՝ գյուղական, թաղային, գավառային, գավառական, քաղաքային, Կենտրոնական կոմիտեների եւ Բյուրոյի¹:

Կուսակցությունը ճյուղավորված էր հանրապետության բոլոր անկյուններում: Նրա շարքերում էին ընդգրկված սոցիալական գրեթե բոլոր խավերի ներկայացուցիչներ՝ առաջին հերթին աշխատավոր զանգվածներ՝ գյուղացիներ, բանվորներ, արհեստավորներ, ինչպես նաեւ մտավորականներ, ծառայողներ, ուսանողներ: Նա իր կազմակերպական ցանցն ուներ նաեւ աշակերտության մեջ: Ազգային կազմի տեսակետից Հ.Յ.Դ. կազմակերպություններ կային նաեւ ասորիների եւ եզդիների շրջանում: Չնայած նոր կանոնադրությամբ անդամակցության պայմանները դժվարացվեցին (պահանջվում էր 7 հոգու երաշխավորություն), այդուհանդերձ, գնալով կուսակցության շարքերն աճում էին:

Հետհամագումարյան շրջանում կուսակցության ղեկավար մարմինների առջեւ ծառայած խնդիրներն էին՝ մի կողմից նոր կանոնադրության սկզբունքներին համապատասխան հետեւել նրա շարքերի գաղափարաքաղաքական ու բարոյական կայունությանը, իսկ մյուս կողմից իրական գործերով նվաճել ժողովրդական զանգվածների սերն ու հարգանքը: Կուսակցությունը եւ նրա Բյուրոն պետք է ջանային կառավարության համար ստեղծել բարոյական եւ ֆիզիկական մի այնպիսի սոցիալական հենարան, որպեսզի դրա միջոցով արժանի հակահարված տրվեր աջից եւ ձախից դրսևորվող հակապետական ու պարտվողական տրամադրություններին:

Սակայն, ցավոք, անկախ պետականություն կերտող 9-րդ համաժողովի նախագծած որոշումները եւ կազմակերպական սկզբունքները, դեպքերի հետագա աննպաստ զարգացման հետեւանքով, հնարավոր չեղավ մինչեւ վերջ հետետողականորեն կենսագործել: Կազմակերպական կանոնների առանձին հոդվածներ փաստորեն ընդամենը մեկ տարվա կյանք ունեցան: Դրա համար էլ հաջորդ՝ 10-րդ Ընդհանուր ժողովը հարկադրված եղավ կրկին անդրադառնալ կուսակցության կազմակերպական կառույցին եւ այն փոփոխելով՝ հաստատել տալ նոր կազմակերպական կանոններ:

1 Տես «Հ.Յ.Դ. կազմակերպական կանոններ», Ե., 1919, էջ 4:

1919 թ. նոյեմբերի 2-ին Երեսանում փակվեց Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովը, որի աշխատանքները տեւեցին մեկ ամսից ավելի՝ ուղիղ հինգ շաբաթ: Վառ հույսերով փակվեց համագումարը: Պատգամավորները ցրվեցին աշխարհասփյուռ հայության մեջ՝ Ընդհանուր ժողովի որոշումները կյանքի կոչելու համար:

Սովորաբար Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովները լինում են տեսական՝ առնվազն մեկ ամիս: Այս ժողովը եւս բացառություն չկազմեց: Նման եկար տեսողությունը բացատրվում էր նրանով, որ ավելի քան հինգ տարի՝ սկսած 1914 թ. հուլիսից Ընդհանուր ժողով չէր գումարվել: Անհրաժեշտ էր հանրագումարի բերել, իմաստավորել բախտորոշ իրադարձություններով այնքան հարուստ այդ ժամանակաշրջանը, ճշտել կուսակցության վերաբերմունքը կյանքի առաջադրած շատ հարցերի հանդեպ եւ ուրվագծել նրա գործունեության ուղին առաջիկա առանցքային կարեւորության խնդիրների վերաբերյալ: Սրանք էլ ինքնին թելադրում էին օրակարգային հարցերի առատությունը եւ տարողունակությունը:

*«Պատերազմի եւ հեղափոխութեան փոթորկոտ տարիների ընթացքում, - գրում էր «Հառաջը», - կուտակվել էին բազմաթիվ հրատապ լուծում պահանջող հարցեր եւ դրանով է բացատրվում, որ այսքան երկար տեւեց ժողովը»*¹: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ Դաշնակցության այնքան ներկայացուցչական այդ համաժողովին մասնակցում էին մեծ թվով պատգամավորներ շատ ու շատ երկրներից, որոնք մեծ ցանկություն ունեին առանձին ելույթով հանդես գալ: Այս ու այլ պատճառներով Հ.Յ.Դ. համաժողովները կարծես ստանում են մի տեսակ տիեզերական ժողովների բնույթ:

Այս համաժողովի արդյունքները ամփոփելիս եւ նրա նշանակությունը գնա-

1 «Հառաջ», 4 նոյեմբերի 1919 թ.:

հատելիս այն պետք է որակել որպես *հայկական պետականության գաղափարի կայացման ու ամրապնդման համագումար*: Այս համագումարով է, որ փաստորեն հայ ժողովուրդը հրաժարվում է մինչև այդ որդեգրած ինքնավարության նպատակադրումից եւ հաստատականորեն իր դրոշի վրա պարզում «Ազատ, Անկախ եւ Միացյալ Հայաստան» ստեղծելու նվիրական ձգտումը:

Հարկավ, Հ.Յ.Ռ. մեղքը չէր, որ 1920 թ. Հայաստանից դուրս խմորված եւ նրա անկախության ու պետականության դեմ ուղղված կործանարար գործընթացները թույլ չտվեցին հայ ժողովրդի գլխավոր քաղաքական ուժին՝ Հ.Յ. Ռաշնակցությանը կենսագործել իր կանխագծումները: Թուրք-բոլշևիկյան գործարքով մահացու հարված հասցվեց Ն. Աղբալյանի պատկերած՝ Հայաստանի անկախության նորածիլ ծառին:

1920 թ. Հայոց անկախ պետականության կորստից հետո էլ, մինչև օրս, Հ.Յ.Ռ. հայ քաղաքական, թերեւս, եզակի այն կուսակցությունն է, որ 1924/1925 թթ. Փարիզում գումարված 10-րդ (Ժ) Ընդհանուր ժողովում հաստատված ծրագրի քաղաքական պահանջի համաձայն մնում է ամենահետեւողական պահանջատերը՝ «անըթիթ պահակը Հայ Դատի»¹ նպատակ դնելով կերտել Միացյալ եւ Անկախ Հայաստան²: Իր շուրջ 70-ամյա տարագրության մեջ Դաշնակցությունը շարունակել է պայքարը՝ հանուն Միացյալ եւ Անկախ Հայաստանի, աշխարհասփյուռ հայությունը ամբողջացած հայրենիքում տեսնելու հրամայականով:

Հ.Յ.Ռ. 9-րդ Ընդհանուր ժողովից ի վեր կուսակցության քաղաքական դավանանքը եւ վերջնանպատակը եղել եւ մնում է Միացյալ եւ Անկախ Հայաստանի տեսլականը, որը կազմում է վերջին 75 տարվա հայ քաղաքական մտքի խարիսխը: Այս պահանջը վերացական գաղափար չէ, այլ գործնական պայքարի դրոշակ, որն աստիճանաբար իր մարմնավորումն է գտնում արցախյան պայքարում, որպես Միացյալ եւ Անկախ Հայաստանի հիմնապահանջի բաղկացուցիչ մաս:

Այսպիսով, հայ ժողովուրդն իր առաջատար կուսակցության հետ միասին բարենորոգումների եւ ինքնավարության համետ ծրագրային պահանջներից, պատմական գործընթացների տրամաբանությամբ ու թելադրանքով, հանգեց Միացյալ, Ազատ եւ Անկախ Հայաստանի գաղափարին եւ մինչև օրս հավատարիմ է մնում քաղաքական այդ հիմնանպատակին:

1 Նավասարդյան Վ., Դաշնակցության քաղաքական ուղին, Կահիրե, 1925, էջ 3:

2 Տե՛ս «Հ.Յ. Դաշնակցության ծրագիր», Ժնեւ, 1925, էջ 20:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք	5
1. Նախապատրաստություն - սկիզբ	8
2. Ընթացքը	11
3. Միացյալ եւ Անկախ Հայաստան	23
4. Ծրագիր	27
5. Որոշումներ	30
6. Կազմակերպական կանոններ	40
Եզրափակում	44

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈՒՅԱՆ

Հ.Յ.Դ. 9-րդ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Խմբագիր՝ Խ. Տեր-Գրիգորյան
Սրբագրիչ՝ Օ. Միքայելյան
Էջադրող՝ Շ. Ավալյան
Հրատ. լուսանկարիչ՝ Ռ. Հակոբյան

Ստորագրված է տպագրության 29.11.94:
Չափսը՝ 60x84 1/16: Տպգրությունը՝ օֆսեթ:
Տպագրական՝ 3,0 մամուլ: Պատվեր՝ 434:
Տպաքանակը՝ 2000 օրինակ:

